ՕՐԱՑՈՅՑ

1916

ՆԱՀԱՆՋ ՏԱՐԻՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

ՄՈՒՇԵՂ ՔՐԵԳԻՍԿՈՍ

ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
The Prelacy of Armenians in America
1968

1915
Տպարան ՀԱՅԳԷԷի
ՊՈՍՏՈՆ

COSMOPOLITAN DRUG Co.

42 Kneeland St. 99 Harrison Ave.
Boston, Mass.

TELEPHONE { OXFORD 22113
OXFORD 22293

Գոզմոբոլիթըն Դեղարանը պատիւ ունի ծանուցանել Հայ հասարակութեան թէ կը պահէ ամէն տեսակ բուսային, հանքային դեղեր, մասնաւորապէս պատրաստ ունի երկրի մէջ գործածուած ժողովրդային դեղերու ճոխ հաւաքածոյ մը։

Անոնք որ կը տառապին ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶՂԱՑՆՈՒԹԵՆԷ, արեան անմաքրութենէ, և ստամոքսի խանգարումէ, թող փորձեն HEMOPLITON (ՀԷՄՕՓԼԻԹՕՆ) դեղը, որը վստահ ենք զիրենք պիտի գոհացնէ լիովին։

Բոլոր գրութիւնները ուղղել՝
Տնօրէն ՄԻՀՐԱՆ ԵԱՐՏՄԵԱՆԻ

ՕՐԱՑՈՅՑ

1916

ՆԱՀԱՆԶ ՏԱՐԻՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

ՄՈՒՇԵՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

1915

Տպարան «ԱԶԳ»ի
ՊՈՍՏՈՆ

Գիր Տարւոյն	ՅՄ.
Եօթներեակ	ԵԶ.
Վերաղիր	Զ.
Տանուտէր	ԽԵՑԳԵՏԻՆ
Թուական Հայոց	ՌՑԿԵ.

ԱՍՏՂԵՐ

Վա՛ր վա՛ր թափեցէք ո՛վ ծաղկեփունջեր
Երկնակամարին, ասղեր կենդանի,
Զարդարելու մեր կեանքին սեւ հջեր,
Կամ պսակելու ճակաս տիտանի:

Իջէ՛ք ororել գերեզմաններուն,
Զարդոսուած Հայուն, շիրմազուրկ, անտէր
Նահատակներու արիւնազանգ ֆուն,
Զի բռնակալը մեր տունն է ֆանդեր:

Իջէք երկինքի յաղթակամարէն
Մեր ազատութեան զերդ աւետաւոր,
Եւ ձեր ճանանչներ թող իսպառ մարեն
Հայուն կըսկիծը, մահը դարաւոր:

ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Հնդիկն երջանիկ կ՚ըլլայ ապահով
Անէացումովն իր նիրվանային,
Գինովն ըմպելեաց տակառի մը քով,
Եւ նահատակը՝ մօտ գերեզմանին :

Ամբողջ մարդկութեան գալարուին աղիք,
Ա՛խ, երջանկութեան փափաքովն ուժգին,
Բայց երջանկութիւնն էտրլվայս ծաղիկ
Անդունդին վրայ կը բուսնի կեանքին :

Տենչանքներ բոլոր, իղձեր անհամար
Անոր շուրջ դառնան պէս թիթեռնիկի,
Բայց տեսլականը պաշտողին համար
Զի՛ք երջանկութիւն առանց արցունքի :

1916

ՅՈՒՆՎԱՐ

1 Շբ. Աբգարու թագաւորին
2 ԿԻՐ. Ե. ԿԻՐ. ՅԻՍՆԱԿԱՑ ակ
3 Բշ. Աբրահամու և Խորենայ
4 Գշ. Աստուածատրոյ Վկային
5 Դշ. Պահք
6 Եշ. Դաւթի Մարգարէին
7 Ուր. Պահք
8 Շբ. Ստեփաննոսի Նախավկային
9 ԿԻՐ. Զ. ԿԻՐ. ՅԻՍՆԱԿԱՑ աձ
10 Բշ. Պետրոսի և Պօղոսի
11 Գշ. Որդւոցն Որոտման (Բարեկենդան Ս. Ծննդեան)
12 Դշ. Պահք
13 Եշ. »
14 Ուր. »
15 Շբ. »
16 ԿԻՐ. Է. Կիր. Յիսնակաց դկ
17 Բշ. Պահք
18 Գշ. Ճրագալոյց
19 Դշ. Ս. ԾՆՈՒՆԴ բձ
20 Եշ. Բ օր Ծննդեան
21 Ուր. Գ » »
22 Շբ. Դ » »
23 ԿԻՐ. Ե » » դձ
24 Բշ. Զ » »
25 Գշ. Է » »
26 Դշ. Տօն Անուանակոչութեան Քսի.

27 Եշ. Յովհաննու Կարապետին
28 Ուր.
29 Շբ. Պետրոսի Հայրապետին
30 ԿԻՐ. Ա. Կիւրակէ գկ
31 Բշ. Անտոնի, Տրիփոնի, Պարսամայ,

ՓԵՏՐՎԱՐ

1 Գշ. Թէոդոսի Թագաւորին
2 Դշ. Պահք
3 Եշ. Կիրակոսի, Հուղիտայի
4 Ուր. Պահք
5 Շբ. Աթանասի և Կիւրղի
6 ԿԻՐ. Բ. Կիւրակէ գմ
7 Բշ. Վահանայ Դողթնեցւոյն
8 Գշ. Եւդինեայ Կուսին
9 Դշ. Պահք
10 Եշ. Եւդինէոսի, Մակարիոսի
11 Ուր. Պահք
12 Շբ. Գրիգորի Աստուածաբանին
13 ԿԻՐ. Գ. ԿԻՐ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՌԱՋԱՒՈՐԱՑ բկ
14 Բշ. Պահք
15 Գշ. »
16 Դշ. »
17 Եշ. »
18 Ուր. » Ցիշատակ Յովնանու Մարգարէին
19 Շբ. Ս. Սարգիս
20 ԿԻՐ. Կիրակի բմ
21 Բշ. Ատոմանց

22 Գշ. Սուքիասեանց: Տարեդարձ Վաճիանկիրընի
23 Դշ. Պահք
24 Եշ. Ոսկեանց
25 Ուր. Պահք
26 Շբ. Սահակայ Պարթեւի
27 ԿԻՐ. ՏԵԱՌՆԸՆԱՌԱՋ ակ
28 Բշ. Մարկոսի Եպիսկոպոսին
29 Գշ. Ղեւոնդեանց Քահանայից

ՄԱՐՏ

1 Դշ. Պահք
2 Եշ. Վարդանանց զօրավարաց
3 Ուր. Պահք
4 Շբ. Կ. Պոլսոյ Ժողովոյն
5 ԿԻՐ. դկ Բուն Բարեկենդան
6 Բշ. Պահք
7 Գշ. »
8 Դշ. »
9 Եշ. »
10 Ուր. »
11 Շբ. Թէոդորոսի զօրավարին
12 ԿԻՐ. դմ Բ. Կիրակի Մեծ Պահոց
13 Բշ. Պահք
14 Գշ. »
15 Դշ. »
16 Եշ. »
17 Ուր. »
18 Շբ. Կիւրղի Հայրապետին
19 ԿԻՐ. գկ Գ. Կիրակի Անառակին

20 Բշ. Պահք, (Գարնանամուտ և գիշերահաւասար)
21 Գշ. »
22 Դշ. »
23 Եշ. »
24 Ուր. »
25 Շբ. Յովհաննու Հայրապետին
26 ԿԻՐ. զկ Դ. Կիրակի Տնտեսին
27 Բշ. Պահք
28 Գշ. »
29 Դշ. »
30 Եշ. »
31 Ուր. »

ԱՊՐԻԼ

1 Շբ. Քառասուն Մանկանց
2 ԿԻՐ. բկ Ե. Կիր. Դատաւորին
3 Բշ. Պահք
4 Գշ. »
5 Դշ. »
6 Եշ. »
7 Ուր. »
8 Շբ. Լուսաւորչի Մուտն ի Վիրապն
9 ԿԻՐ. բկ Զ. Կիրակի Գալստեան
10 Բշ. Պահք
11 Գշ. »
12 Դշ. »
13 Եշ. »
14 Ուր. »
15 Շբ. Ղազարու Յարութեան

16 ԿԻՐ. ակ Ծաղկազարդ
17 Բշ. Աւագ Բշ.
18 Գշ. » Գշ.
19 Դշ. » Դշ. Հայրենասէրներու օր
20 Եշ. » Եշ. Աւետեաց Ս. կուսին
21 Ուր. » Ուր.
22 Շբ. » Շբ. Ճրագալոյց
23 ԿԻՐ. աա ԶԱՏԻԿ
24 Բշ. Աւուրք Զատկի
25 Գշ. » »
26 Դշ. » »
27 Եշ. » »
28 Ուր. » »
29 Շբ. Գլխատում Յովհաննու Մկրտչի
30 ԿԻՐ. դկ Նոր Կիւրակէ կամ Կրկնազատիկ

ՄԱՅԻՍ

1 Բշ. Ցինանց
2 Գշ. »
3 Դշ. »
4 Եշ. »
5 Ուր. »
6 Շբ. »
7 ԿԻՐ. դա Գ. Կիրակի Աշխարհամատրան (Կանանչ Կիր.)
8 Բշ. Ցինանց
9 Գշ. »
10 Դշ. »
11 Եշ. »
12 Ուր. »

13 Շբ. »
14 ԿԻՐ. գկ Դ. Կիր. Կարմիր Կիրակի
15 Բշ. Ցինանց
16 Գշ. »
17 Դշ. »
18 Եշ. »
19 Ուր. »
20 Շբ. »
21 ԿԻՐ. գկ Ե. Կիր. Երևման Ս. Խաչ
22 Բշ. Ցինանց
23 Գշ. »
24 Դշ. »
25 Եշ. »
26 Ուր. »
27 Շբ. »
28 ԿԻՐ. բկ Զ. Կիրակի
29 Բշ. Ցինանց
30 Գշ. » Մեռելոց օր
31 Դշ. »

ՑՈՒՆԻՍ

1 Եշ. Ցինանց Համբարձում դկ
2 Ուր. »
3 Շբ. »
4 ԿԻՐ. բկ Է. Կիրակի. Երկրորդ Ծաղկազարդ
5 Բշ. Ցինանց
6 Գշ. »
7 Դշ. »
8 Եշ. »
9 Ուր. »

10 Շբ. »
11 ԿԻՐ. ակ Հոգեգալուստ (Բարեկենդան Եղիական Պահոց)
12 Բշ. Պահք
13 Գշ. »
14 Դշ. »
15 Եշ. »
16 Ուր. »
17 Շբ. Պընդքը Հիլի օր
18 ԿԻՐ. ակ Կիրակէ Ցարուքեան
19 Բշ. Հռեփսիմեանց
20 Գշ. Գայիանեանց
21 Դշ. Պահք
22 Եշ. Յովհ. Կարապետին և Աթանազինեայ
23 Ուր. Պահք
24 Շբ. Ս. Գրիգոր Լուսաւորչին Ելանելոյն ի վիրապէն
25 ԿԻՐ. դկ Բ. Կիր. Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ
26 Բշ. Մանկանց Բեթղեհեմի
27 Գշ. Նունեայ և Մանեայ
28 Դշ. Պահք
29 Եշ. Սահակայ և Յովսեփայ Իշխանացն մերոց
30 Ուր. Պահք

ՑՈՒԼԻՍ

1 Շբ. Ներսէսի և Խաթայ
2 ԿԻՐ. դկ Գ. Կիրակի
3 Բշ. Եղեփանու

4 Գշ. Կոստանդիանոսի թագաւորին
Անկախութեան օր
5 Դշ. Պահք
6 Եշ. Թէոդիտոնի Գաղատացւոյն
7 Ուր. Պահք
8 Շբ. Գիւտի Նշխարաց Ս. Լուսաւորչին
9 ԿԻՐ. զկ Դ. Կիրակի
10 Բշ. Անտոնիոսի, Թէոփիլոսի
11 Գշ. Դանիէլի Մարգարէին
12 Դշ. Պահք
13 Եշ. Սահակայ և Մեսրոպայ
14 Ուր. Պահք
15 Շբ. Տրդատայ, Աշխէնի և Խոսրովիդխտոյ
16 ԿԻՐ. զմ Ե. Կիրակի
17 Բշ. Կալեստրատոսի
18 Գշ. Զաքարիա Մարգարէին
19 Դշ. Պահք
20 Եշ. Եղիա Մարգարէին
21 Ուր. Պահք
22 Շբ. Երկոտասան Առաքելոց
23 ԿԻՐ. բկ Զ. Կիրակի, Բարեկենդան
Վարդավառի
24 Բշ. Պահք
25 Գշ. »
26 Դշ. »
27 Եշ. »
28 Ուր. »
29 Շբ. Ցիշատակ Տապանակի

30 ԿԻՐ. բմ Վարդավառ
31 Բշ. Բ. օր Վարդավառի

ՕԳՈՍՏՈՍ

1 Գշ. Գ. օր Վարդավառի
2 Դշ. Դ. » »
3 Եշ. Ե. » »
4 Ուր. Զ. » »
5 Շբ. Թադէոսի Առաքելոյն և Սանդըխտոյ Կուսին
6 ԿԻՐ. ակ Բ. Կիր. Վարդավառի
7 Բշ. Կիպրիանոսի Եպիսկոպոսին
8 Գշ. Աթանագինեայ
9 Դշ. Պահք
10 Եշ. Սրբոց Նախահարց
11 Ուր. Պահք
12 Շբ. Որդւոց և թոռանց Ս. Լուսաւորչին
13 ԿԻՐ. ամ Գ. Կիրակի
14 Բշ. Մակարայեցւոց
15 Գշ. Երկոտասան Մարգարէից
16 Դշ. Պահք
17 Եշ. Սոփիայ և իրենց դստերացն
18 Ուր. Պահք
19 Շբ. Եփեսոսի Ժողովոյն
20 ԿԻՐ. դկ Դ. Կիրակի Բարեկենդան
Աստուածածնայ
21 Բշ. Պահք
22 Գշ. »
23 Դշ. »
24 Եշ. »

25 Ուր. »
26 Շբ. Շողակաթին Ս. Աստծնայ.
27 ԿԻՐ. դԿ Վերափոխումն Ս. Աստուածածնայ.
28 Բշ. Բ. օր Վերափոխման
29 Գշ. Գ. » »
30 Դշ. Դ. » »
31 Եշ. Ե. » »

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1 Ուր. Զ. օր Վերափոխման
2 Շբ. Է. » »
3 ԿԻՐ. գԿ Բ. Կիր. »
4 Բշ. Ը. օր » Աշխատութեան օր
5 Գշ. Յովակիմայ և Աննայի
6 Դշ. Պահք
7 Եշ. Երեմիա Մարգարէին
8 Ուր. Պահք
9 Շբ. Թովմայի, Յակոբայ և Շմաւոնի Առաքելոց
10 ԿԻՐ. գԿ Գ. Կիրակի
11 Բշ. Ստեփաննոսի Ուլնեցւոյն
12 Գշ. Եղէկիէլի, Եզրի և Զաքարիայի Մարգարէից
13 Դշ. Պահք
14 Եշ. Յովհ. Կարապետին և Յակոբայ արդարոյն
15 Ուր. Պահք
16 Շբ. Նիկիոյ Ս. Ժողովոյն
17 ԿԻՐ. բԿ Դ. Կիրակի Բարեկենդան

դան Ս. Խաչի
18 Բշ. Պահք Խաչի
19 Գշ. » »
20 Դշ. » »
21 Եշ. » » Ծնունդ Աստծնոյ
22 Ուր. » »
23 Շբ. Տօն Ս. Եկեղեցւոյ, (Աշնանամուտ և Գիշերահաւասար)
24 ԿԻՐ. բԿ Խաչվերաց
25 Բշ. Տօն Խաչի
26 Գշ. Տօն Եկեղեցւոյ
27 Դշ. » »
28 Եշ. » »
29 Ուր. Տօն Խաչի
30 Շբ. » »

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1 ԿԻՐ. ակ Բ. Կիր. Բարեկենդան Վարագայ Խաչի
2 Բշ. Մամասի, Փիլիկտիմոնի, Ս. Սիւնակեցի
3 Գշ. Բեբրոնի, Մարիանաի և Շուշանայ
4 Դշ. Պահք
5 Եշ. Բարաղամի, Անթիմոսի, Երանոսի
6 Ուր. Պահք
7 Շբ. Գէորգայ զօրավարին
8 ԿԻՐ. աԿ Գ. Կիր. Վարագայ Խաչ
9 Բշ. Դաւթի Դվնեցւոյն
10 Գշ. Եւստաքէոսի Լայլն

11 Դշ. Պահք
12 Եշ. Սահակայ, Համազասպայ — Գոլոմպոսի օր
13 Ուր. Պահք
14 Շբ. 72 աշակերտացն Քրիստոսի
15 ԿԻՐ. դկ Դ. Կիրակի
16 Բշ. Փոկասու
17 Գշ. Թեկղեայ, Վարվառեայ, Պեղադոսի
18 Դշ. Պահք
19 Եշ. Պանտալէոնի Բժշկին
20 Ուր. Պահք
21 Շբ. Թարգմանչաց Վարդապետացն
22 ԿԻՐ. դկ Ե. Կիրակի
23 Բշ. Գիւտի Նշխարացն Գրիգորիսի Աղուանից Կաթողիկոսին
24 Գշ. Անանիայի, Մատաթիայի և Փիլիպոսի
25 Դշ. Պահք
26 Եշ. Դիոնիսիոսի Արիսպագացւոյն, Տիմոթէոսի և Տիտոսի
27 Ուր. Պահք
28 Շբ. Զորից Աւետարանչացն
29 ԿԻՐ. զկ Զ. Կիրակի
30 Բշ. Ղունկիանոսի
31 Գշ. Թէոդիտոնի

ՆՈՅԵՄԲԵՐ

1 Դշ. Պահք
2 Եշ. Խարիթեանց
3 Ուր. Պահք

4 Շբ. Երկոտասան Վարդապետացն
5 ԿԻՐ. գկ Է. Կիր. Գիւտ Խաչ
6 Բշ. Անաստասի և Վարոսի
7 Գշ. Հիպերիքեանց
8 Դշ. Պահք
9 Եշ. Սեվերիանոսի և Բաբելայ
10 Ուր. Պահք
11 Շբ. Յովն Ոսկեբերան Հայրապետին
12 ԿԻՐ. բկ Ը. Կիրակի
13 Բշ. Ստեփաննոսի Հռովմայ Հայրապետին
14 Գշ. Ակիլիսիմեայ Եպիսկոպոսին
15 Դշ. Պահք
16 Եշ. Մեսրոպանոսի, Աղեքսանդրոսի
17 Ուր. Պահք
18 Շբ. Հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի
19 ԿԻՐ. բկ Թ. Կիրակի
20 Բշ. Մելեսոսի, Մինասայ
21 Գշ. Դիմետրի Վկային և Բասելիսկոսի
22 Դշ. Պահք
23 Եշ. Գուրիասայ
24 Ուր. Պահք
25 Շբ. Անտրէի և Փիլիպոսի Առաքելոցն
26 ԿԻՐ. ակ Ժ. Կիրակի
27 Բշ. Աբրահամու, Խորենայ և ա-

Նարծաթ բժշկացն

28 Գշ. Անտրէի զօրավարին

29 Դշ. Պահք

30 Եշ. Ատրիանոսի և կնոջն Անատոլայ. Շնորհակալութեան օր

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1 Ուր. Պահք

2 Շբ. Հնոց և Նորոց

3 ԿԻՐ. ԱԵ. ԺԱ. Կիր. Բարեկենդան Յիսնակի

4 Բշ. Պահք, Երից ամաց ընծայման Ս. Կուսին

5 Գշ. »

6 Դշ. »

7 Եշ. »

8 Ուր. »

9 Շբ. Գրիգոր Սքանչելագործին, Նիկողայոսի և Միւռոնայ

10 ԿԻՐ. ԴԿ Ա. Կիրակի Յիսնակաց

11 Բշ. Յուլեանեայ և Վասիլուհւոյ

12 Գշ. Ղունկիանոսի

13 Դշ. Պահք

14 Եշ. Կղեմայ և Բաղարատայ

15 Ուր. Պահք

16 Շբ. Թադէոսի և Բարթուղիմէոսի

17 ԿԻՐ. ԴԵ Բ. Կիրակի Յիսնակաց

18 Բշ. Գենարիոսի Եպիսկոպոսին

19 Գշ. Արդարու Թագաւորին

20 Դշ. Պահք

21 Եշ. Հարցն Եգիպտացւոց

22 Ուր. Տօն յղութեան Մարիամու ի յԱննայէ.

23 Շբ. Նիկողայոսի Հայրապետին

24 ԿԻՐ. ԳԿ Գ. Կիր. Յիսնակաց

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՅ

25 Բշ. Մինասայ, Երմոգինեայ, Գրիգորոսի. Քրիստոսի

26 Գշ. Կուռնելիոսի և Շմաւոնի

27 Դշ. Պահք

28 Եշ. Եւստրատիոսի, Օգսենտիոսի

29 Ուր. Պահք

30 Շբ. Ս. Յակոբ

31 ԿԻՐ. ԳԵ Դ. Կիրակի

1917

ՅՈՒՆՎԱՐ

1 Բշ. Իգնատիոսի, Աղդէի, Մարտիրոսի

2 Գշ. Թէոպոմպայ Եպիսկոպոսին

3 Դշ. Պահք

4 Եշ. Ինդոսի և Դոմնայի

5 Ուր. Պահք

6 Շբ. Դաւթի Մարգարէին

7 ԿԻՐ. ԲԿ Ե. Կիրակի

8 Բշ. Ստեփաննոսի Նախավկային

9 Գշ. Պողոսի և Պետրոսի

10 Դշ. Պահք

11 Եշ. Որդւոցն Որոտման (Բարեկենդան Ս. Ծննդեան)

12 Ուր. Պահք

13 Շբ. » Բարսղի Հայրապետին

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՕՆԵՐ

12 *Փետր.* Lincoln's Birthday
22 » Washington's Birthday
30 *Մայիս* Decoration Day
17 *Յունիս* Bunker Hill Day
4 *Յուլիս* Independence Day
4 *Սեպտ.* Labor Day
12 *Հոկտ.* Columbus Day
30 *Նոյ.* Thanksgiving Day
25 *Դեկտ.* Christmas Day

Tel· Richmond 2549

ARARAT GROCERY CO, INC.

Importers and Wholesale Grocers

150=152 Commercial Street

BOSTON MASS.

ԱՐԱՐԱՏ ՆՊԱՐԵՂԷՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ, ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ, ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՅ ՏՈՒՆՆ Է ԱՄԲՈՂՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ։

Թէպէտ պատերազմը դադրեցուց Արեւելեան եւ մանաւանդ Թուրքիոյ ապ-

բանքներու ներածումը Ամերիկա, բայց մենք Տակաւին մաս մը Արեւելեան ապրանքներ ունինք առձեռն: Իսկ Ամերիկեան նպարեղէններու ամէն տեսակները կը պահենք, ինչպէս ուէ Wholesale Grocer կը պահէ:

Ունինք նաև երկու Պլղուրի գործարան, ուր կը պատրաստենք ամենալաւ և մաքուր Պլղուր:

Այս ընկերութիւնը թէև հինգ տարիներէ ի վեր այս անունով գոյութիւն ունի, սակայն անոր վարիչները 20 տարիներու առեւտրական փորձառութիւն ունեցող անձինք են: Այս իրողութիւնը գրաւական մըն է, որ Հայ Նպարավաճառները նկատի ունենալու են:

Ունինք նաև ճիւղ մը Ուստրի մէջ, Washington St., ուր կը պահենք ամէն տեսակ նպարեղէններ: Մեր Ուստրի հայրենակիցներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք Ընկերութեանս Ուստրի Տան:

Կարդացէք նաև մեր փոքրաքանակ խանութներու յայտարարութիւնը օրացոյցիս կողքին երրորդ էջին վրայ:

ՀԱՅՐԵՆԻ ՁԱՅՆԵՐ

I
ՄԱՀՈՒԱՆ ՄՂՁԱՒԱՆՋԸ

Գերեզմանի մը կափարիչին պէս կը ծանրանայ, կը ծանրանայ մահուան մղձաւանջը, տառապակիր հայ կուրծքերու վրայ, որոնք ա՛լ չորցեր են հառաչելէն:

Դուլ, դադար չ'կայ թշնամիին համար. վատաբար կըսպաննէ անի, զինաթափ ընելէ վերջ ազատութեան տարփանքէն գինով հայ մարդը, և ոտնատակ կընէ ծերերն ու կիները, տարագրութեան ճամբուն վրայ:

Եղերական պատահարներու փոթորիկ մըն է անցեր Հայաստանի վրայէն:

Ամայի՛. գիւղերն ու քաղաքները, ու միակ դիակներն են որ կը խօսին այն անանուն դաղանութիւններու մասին, զոր Թուրքին ոճրագործ միտքը յղացաւ ու գործադրեց:

Կը քալեն տարագիրները, հայրենի հողէն ու տունէն բռնազուրկ. կը քալեն դէպի անծանօթ օտարութիւնը Հայրենիքի սէրը և մահուան մղձաւանջը գրկած: Եւ տառապանքէն ու սուրէն կաթող մահն է, որ

փրկարար հրեշտակի մը պէս օգնութեան կը կանչուի յոգնարեկ վտարանդիներէն։

Ժամանակին, Սրբազան երազատեսը մարգարէական ներշնչումով մը զգացած էր չարաշուք վայրկեաններու և լկող տառապանքներու մէջոցին մահուան փրկարար ազդեցութիւնը, ազատարար ներկայութիւնը և ըսած էր. «ան օրերը մարդիկ մահը պիտի փնտռեն ու պիտի չ'գտնեն, և պիտի ուզեն մեռնիլ, և մահը անոնցմէ պիտի փախչի (Յայտ. Թ. 6)։

Քանինե՛ր, ընտանեզո՛ւրկ, այսօր մի և նոյն փափաքովը կ'այրին. որովհետև մահուան մղձաւանջը աւելի ահարկու է և դժոխային քան մահը...։

Բայց ահա՛, ան կը հասնի... մահը, անօթութեան, լկումի, ջարդի, կախաղաններու կերպարանքին տակ, անկուշտ ու անյագ, աւելի դաժան քան բորենիի ճիրանները, աւելի կատաղի քան վիրաւոր էգ վագրը։

Եւ հիմա գերեզմաններ, մեռելաստաններ միայն ունինք մեր աչքին առջև։

Հիմա է որ մահն ու կեանքը ա՛յնքան պիրկ, ա՛յնքան ջղայնօրէն կը կռուին իրարու հետ հայու մարդկային միսին տիրանալու համար։ Եղեռնի սև բանդաղուշանք մը կը տարածուի անհունօրէն, ցաւերու և արիւնի հովիտներէն մինչև համազարկի կրակովը մրրկոտ բլուրներուն վրայ. արիւնով նախշուն սև գերեզմանո՛ց, ... ուր երկիրը բաւական հող չունի մեռելները թաղելու համար ...։

Եւ, հէ՛ք վերապրողներուն կը մնայ արիւնաքամ աչքով մը նայիլ ճամբաներուն երկայնքը ցրցքնուած սիրելիներու դիակոյտին, վաղուան մահուան բացարձակ դիտակցութեամբը, կուրծքերնուն վրայ գրկած այդ մի և նոյն մահուան մղձաւանջը, ցուրտ և անողոք։

Ու ահա, սգաւոր տարագիրներուն — ուխտաւո՛ր անծանօթին — տողանցէն կը լսենք մեռելական աղերսն

«Երանի՛ մեռնողներուն. . . »։

II

ՎՐԷԺ

Պատիւ վսե՛մ արտայայտութիւն...։

Մեռնողներուն նուիրական կոտակը, որ արիւնի միգամածներու մէջէն կը հնչուի գերեզմանալին խորհրդաւոր սարսուռով։

«Ով Բաբելոնի աւերող աղջիկ, երանի անոր, որ քեզի կը հատուցանէ մեզի ը-րածներուդ փոխարէնը։ Երանի անոր, որ քու զաւակներդ կը բռնէ ու քարի կը զարնէ» (Սղմ. ՃԼԷ. 8 . 9)։

Բռնաչարչար և Հայրենազուրկ ժողովուրդի մը վերջին ողբերգութիւնն է լը-սածնիս, զոր տարաշխարհի հովերը, նը-ւիրական մասունքի մը պէս գրկած, կը բե-րեն մեզի աւանդելու: Արեւելքի դըժ-բախտներուն մէջ գերեզմանափոր հայ տա-ռապեալներու դուժկան ու փոթորկող հո-ղին և անոր արիւնոտ բողոքն է մեր լսածը. . . . Վրէժ . . . :

Այդ հոգին կը հոսի վճիտ առուակներու մէջէն, որոնք, աւա՜ղ, հիմա պղտոր ար-ցունքներով ուռած են. կը հոսի գիւղ գիւղ գետերու մէջէն, որոնք արիւնով ու դիակ-ներով ծոցուորած են. կը հոսի հայ օճախ-ներէն, որոնք իրենց վրայ թափուած ար-ցունքէն ու արիւնէն մարե՛ր են ալ:

Լսեցէ՛ք հովերուն կաղկանձը, հարաւի խորշակներուն կիզանուտ շունչը, որոնք մեղուի պարսերու պէս պիտի բզզան շա-ռունակ մեր դանկին խորերը, մինչեւ ին-կողներուն, կախուածներուն, աքսորուած-ներուն ու բռնարարուածներուն վրէժը լուծուի. . . :

Եւ այդ յաղեցած վրէժն է որ փառաւոր ծիրանիի մը պէս պիտի պատանդէ իր պատիւին մէջ ըկուած Հայութեան արիւ-նոտ դիակը:

Եւ այդ յաղեցած վրէժն է որ իբրեւ քղամիթ պիտի ձգուի ոճրագործներու ուսին, պատուի, փառքի, կեանքի ու ա-

զատութեան հրաւէրի օրերուն:

Եւ այդ յաղեցած վրէժն է որ վաղուան հայ մանուկները պիտի հաղնին, իբրեւ փառազգեստ, իրենց ջարդուած հայրերու Մեռելոցի օրերուն:

Եւ այդ յաղեցած վրէժն է որ դրոշի մը պէս իր կարմիր ծալքերը պիտի ծածանէ հայկական յաղթաթափօրին առջեւէն:

Ու ես հրճուանքով ու արցունքով կը դիտեմ հոգիներուն խորէն պտկող այդ փառաւոր զգացումին արշալոյսը: Վա-հագնի արեւին պէս, ոսկի գիսակներով շողարձակ, ա՛ն վեր կ՚ելլէ արիւններու ծովէն, բոսորացած ու մաքուր, և կը յայտնուի աչքերու մէջ, սրտերու խորը, վեհափառ տիտանի մը նման, և իբրև ներ-շընչում մը, որ կը դղրդէ հոգիները, կը ծառանայ, կը ճիւղաւորի կայծակի մը պէս թեւաւոր, օր մը, — սպասուած և փափաք-ուած օր — հրաբուխի մը պէս պոռթկալու իր կրակէ հեղեղները ոճրագործ դանկերու վրայ:

Եւ այդ օրը ա՛լ պիտի չըսենք բանաս-տեղծին հետ.

Երեք եղբայր ունէինք
Խորհուրդի պէս կախեցին,
Երեք քոյրեր ունէինք
Սիւնի մը պէս վառեցին:
Երեք զաւակ ունէինք

Հանճարի պէս խեղդեցին . . .
Երեք տուներ ունէինք
Բոյնի մը պէս քանդեցին . . .
. . . Երեք վանդակ ունէինք
Կուրծքի մը պէս կոտրեցին :
Երեք յոյսեր ունէինք
Թարմ ծառին պէս կտրեցին,
Երեք ճամբայ ունէինք
Երկնքի պէս ծածկեցին :

Եւ այդ օրը մեր հաշուեյարդարութեան փառաւոր օրը պիտի ըլլայ Հայրենիքի արիւնաղանգ սեղանին առջեւ :

Եւ միայն ա՛յդ օրէն պիտի սկսի իրապէս ապրելու պատուաւոր իրաւունքը Հայութեան համար :

Վրէ՜ժ . . .

Պատիւի վսեմ արտայայտութիւն . . . :

III

ՅՈՅՍԸ

Դիպուածական ժառանգութիւն մը չէ, Յոյսը, որով Հայը կ՚ապրի դարերէ ի վեր :

Ինկողներուն ոտքի կոուան մը պէտք է, չ՚թաղուելու համար խրուտքին մէջ, ուր կը մղուին բռնօրէն :

Եւ մեր ազգային գոյութեան կոուանը Յոյսն է եղած, իրական ու կենդանի Յոյսը :

Յոյսը վարդենին է մեր քանդուած պարտէզին, դարէ դար մեր արիւնովն ու արցունքովը ոռոգուած :

Անով վահանուած մեր կուրծքին վրայ պիտի փչրի լքումին ազգասպան նայուածքը, որչափ ատեն Յոյսը երջանկութենէն փոխառութիւն մը մնայ :

Մեր Յոյսը, ստուգիւ, տխուր է, բայց ո՛չ յուսահատ : Եւ սգաւորի շղարշը այրիին հագած սև շրջազգեստին պէս խորհրդաւոր դեղեցկութիւն մը տուած է իրեն :

Միակ ապաստանարանը անոնց, որոնք քենէ զատ ա՛լ ուրիշ բան մը չունին, Յո՜յս . . . :

Եւ իրապէս այսօր քենէ զատ ուրիշ բան մը չ՚ունինք :

Բայց դուն զօրաւոր ես Աստուծոյ մը չափ, որովհետեւ ամբողջ ցեղի մը արցունքն ու արիւնը քեզի համար թափուեցան :

Մենք, ո՜վ Յոյս, քու տէրդ ու դերիդ, մենք քեզ կը սնուցանենք մարդազոհովը մեր մայրերուն, քոյրերուն ու կտրիճներուն, որոնք քենէ ներշնչուած, քենէ առաջնորդուած, արիւնի ճամբաներէն քալեցին, ազատութեան աստղը բռնելու համար :

Դուն երազն ես, կ՚ըսեն, խաբող գիշերներու, և առաւօտներուն ունայնութիւնը·

դուն պատրանքն ես, կ'ըսեն, մեր տենչանքներուն, և ճերմակ գիշերը մեր գերեզմաններուն վրայ սփռուած. դուն օձի կարկեհան աչքն ես, կ'ըսեն, որ կը մոլորցնես:

Ա՜խ, ինչո՞ւ կ'ուզեն քեզ վտարել մեր սրտէն:

Ընդհակառակն, դուն կեանքն իսկ ես, դուն քաջութիւնն ես ու կորովը, դուն յաւերժական պայքարն ես և կռիւը, դուն Աստուածն ես լքուածներուն:

Իրաւ, քու տաճարներդ մարդկային ոսկորներով չինուած են մեր մէջ. իրաւ, մեր բուրվառները գանկեր են, որոնցմով կը խնկարկենք քեզի, որովհետև դուն այդ գանկերուն, այդ ոսկորներուն պէտք ունիս, անոնցմէ կեանքեր վերստեղծելու համար:

Դուն վիշտին ու տառապանքին ծիծաղկոտ, անմեռուկ աղջիկն ես, և քու արիւնաղանդ վերարկուդ տեսնողները արքայական ծիրանիի հետ կը շփոթեն: Եւ դուն ես որ կը չարատանջես բռնաւորները, քու անթարթ նայուածքովդ, որոնցմէ մէկէն մշտենջենի Սէրը, և միւսէն յաղթանակի Հաւատքը կը փողփողայ: Մարդասպաններն ու թագակիր ոճրագործները մահէն չէ որ կը վախնան, այլ Քենէ, ո՜վ Ցոյս, երբ դուն նուիրական դաշինքով մը կապուած կը մնաս զրկուածներու

հոգիին հետ: Որովհետև, ո՜վ հրաբուխներու կրակէ լանջքերուն վրայ բուսնող որթատունկ, քու կարմիր և հիւթեղ ըստինքներէդ ծծուած փրփուրներուն մէջէն կը քաղենք մեր վաղուան յաղթանակներուն ապահով երաշխաւորութիւնը:

Դուն մերն ես ու պիտի մնաս, որչափ ատեն հրդեհուած տուներուն, քանդուած տաճարներուն և մարած օճախներուն մէջէն արիւնի ու միսի ճենճերումը հոտուրտանք:

Իսկ երբ աւերակները կը յառնեն, երբ քաղաքները կը շէնանան, երբ արտերն ու այգիները կ'արօրադրուին երջանիկ Հայուն ձեռքով, երբ Հայրենիքի ծաղիկները կը բացուին հոտաւէտ, երբ մայրեր իրենց օրրանները կ'օրրեն զուարթ ու անդորր, ո՜վ Ցոյս, այն ատեն դուն համակ Սէր ես դիր, մեր սրտերուն համար, և իբրև Ցաւիտենական զօրութիւն, եղբայրակցո՛ւր Հայերը, և պահպանէ մեր Հայաստանը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Ամերիկահայ առաջնորդական թեմի ազգային–կրօնական գործերու հիմնական ուղղութիւն մը կարենալ տալու համար, ամէն բանէ առաջ պէտք է ունենալ լիակատար վիճակագրութիւն մը։ Միացեալ Նահանգաց, Հարաւային Ամերիկայի և Քանատայի մէջ ցրուած հայութեան ընդհանուր թիւ կը նշանակուի 75,000 էն մինչև 100,000։ Բայց ենթադրութենէ զատ գրական փաստ մը չ'ունինք սոյն իրողութիւնը հաստատող։ Անշուշտ լիակատար վիճակագրութիւն և ազգային մարդահամար ունենալու գործը իր ահագին դժուարութիւններն ունի, ո՛չ միայն անոր համար որ հայ գաղութը չափազանց ցրուած է, այլ և անոր համար, որ քաղաքէ քաղաք տեղափոխութիւնները յաճախադէպ իրողութիւններ են գործաւոր դասակարգին համար, որ 85 % մասը կը կազմէ։

Փափաքելի էր, որ ամէն հայ գաղութ ձեռնարկէր իր գաղթավայրին հայութեան մարդահամարը պատրաստել, և ղրկել Ազգային Առաջնորդարան մինչև 1916 Օգոստոսի վերջ, որպէսզի կարելի ըլլար 1917 տարուոյ օրացոյցով ճշդրտանման պատկերը տալ հայ գաղութին։

Այս տարի կը բաւականանք միայն մեր

ընթերցողներուն ներկայացնել 1914 տարուոյ մկրտութիւններու, պսակներու և մահերու ցանկ մը, որ դժբախտաբար լիակատար չէ, շնորհիւ կարգ մը հովիւներու և հոգաբարձութեանց անպարտաճանաչութեանը։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուստրի	Թեմ	88
Պոստոնի	»	84
Վէսթ Հոպոքընի	»	44
Ֆրէզնօի	»	26
Հարթֆըրտ—Նիւպրիթէնի	»	25
Շիքակօի	»	20
Բրովիտէնսի	»	19
Լօվէլ—Լօրէնսի	»	19
Նիւ Եորքի	»	16
Ֆաուլըրի	»	10
Ֆիլատէլֆիաի	»	7
Լոս Անճէլըսի	»	4
Թրոյի	»	4
Սիրաքուզի	»	2
Մանչ — 195, Աղջիկ — 173		368
ՊՍԱԿՆԵՐ		140
ԹԱՂՈՒՄ		59

ՀԱՅ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Հայաստանի տրուած առաջին անունը Արմենիա եղած է: Արմենիա անունին առաջին անգամ կը հանդիպինք Մալաթիայի մօտ գտնուած կոթողի մը վրայ, ուր Ուրարդուի թագաւոր Մինուաչ (827—784 Ն. Ք.) իր յաղթանակները կը դրոշմէ: Երկրորդ անգամ կը հանդիպինք Դարեհ Վշտասպի բևեռագիր արձանագրութեան մէջ 520 Ն. ք: Հայաստան Արմենիա կոչուած է Թեսալիայէն կամ Թրակիայէն 9—10րդ դարուն (Ն. ք.) դէպի մեր երկիրը գաղթող Արմէն ցեղին անունով:

Հայ և Հայաստան անունները աւելի նոր են բաղդատմամբ Արմեն և Արմենիա անուններուն: Հայ անունի ստուգաբանութեան մասին շատ մը փորձեր կատարուած են (*): Ըստ իս Հայ անունը եղած է pati հնդեւրոպական արմատէն, որ կը նշանակէ ՏԷՐ: Հնդեւրոպական արմատներու հայացումի մէջոցին p h և t յ եղած են գրեթէ միշտ. օր. pater – հայր: Հաւանական է որ ՀԱՅ, ազգային աստուածն էր, ուրիշ Հայերը իրենց անունը առին, ինչպէս ուրիշ ազգեր ըրած էին, և Հայկի զրոյցը,

(*) Այդ փորձերու մասին տես մեր «Հայաստան և Արմենիա» անուն տետրակը, որ պիտի հրատարակուի մօտ օրէն:

այդ աստուածոյն գոյութեան մէկ աղաւաղուած դրուագը կը թուի ըլլալ:

Հայերը, որոնք հնդեւրոպական, Տուրանեան, և ուրիշ ցեղերու խառնուրդ մըն են, երբեք 15—30 միլիոնի թիւ մը չեն ներկայացուցած, ինչպէս շատեր կը խորհին: Թերևս շատ շատ 8—10 միլիոն եղած ըլլան իրենց ամենէն փայլուն միջոցին:

Պատմութեան մէջ վիճակագրական ծանօթութիւններ չ'ունինք Հայերու մասին: Այդ վիճակագրական փորձերը եղած են հազիւ 50 տարիէ ի վեր. բայց անոնցմէ և ո՛չ մէկը կատարեալ եղած է:

1845ին Սուլթան Մէճիտի օրով կատարուած մարդահամարին համաձայն Հայերուն թիւը եղած է 2,500,000:

1872ին այդ թիւը 2,300,000 ցոյց կը տրուի:

Այս անվաւեր մարդահամարէն վերջ, 1878ին Պատրիարքարանի կողմէ պատրաստուած խնդրոյ նիւթ չորս նահանգներու հայերու թիւ կը նշանակուի 1,330,000: Պէտք է ըսել, թէ այս ալ չափազանցութիւն մըն էր, երբ մանաւանդ բաղդատութեան կը դնենք Թուրքերու թիւին հետ:

1881ին ալ վիճակագրութիւն մը կատարուեցաւ որուն արդիւնքը դժբախտաբար չունինք ձեռքերնիս:

1882ին Պատրիարքարանի կողմէ կատարուած վիճակագրութեան համաձայն

հայկական վեց նահանգներու հայ բնակչութեան թիւն է 1,630,000։

1892ին V. Cuinet այդ վեց նահանգներու հայ բնակչութեան թիւը կը դնէ 825,352։

1893–94ին H. F. B. Lynch բացի Սեբաստիայէ, հինգ նահանգներու հայ բնակչութեան թիւը կը դնէ 387,746։

1909ին Պ. Ա. Դօ Վանայ, Բաղէշի և Կարնոյ նահանգներուն հայ բնակչութիւնը կը դնէ 417,000

1912ի կատարուած մարդահամար մը, իր ազգային կէս—պաշտօնական հանդամանքով սապէս կը ներկայացնէ հինգ վիլայէթներու ազգաբնակչութիւնները.

Կարին, 215,000 Հայ 240,000 Թուրք
175,000 զանազան տարրեր.
Վան, 185,000 Հայ 47,000 Թուրք
118,000 զանազան տարրեր.
Բաղէշ, 180,000 Հայ 40,000 Թուրք
162,000 զանազան տարրեր.
Տիգրանակերտ, 105.000 Հայ, 45,000 Թուրք
145,000 զանազան տարրեր
Խարբերդ 168,000 Հայ 102,000 Թուրք
180,000 զանազան տարրեր
Սվազ, 165,000 Հայ 192,000 Թուրք
150,000 զանազան տարրեր

Այս մարդահամարին համաձայն Հայկական վեց նահանգներու բնակչութեանց թիւն էր

Քրիստոնեայ		
Հայ,	1,018,000	
Յոյն,	42,000	
Նեստորական,	123,000	
		1,183,000
Մուսլիման		
Թուրք,	666,000	
Քիւրտ,	424,000	
Զանազան ցեղեր,	88,000	
		1,178,000
Անջատ Կրօններ		
Ղըզըլպաշ,	140,000	
Զաղա Եայլն.	77,000	
Եէզիտի,	37,000	
		254,000
		2,615,000

Զմոռնանք ըսելու, որ այս ցանկէն դուրս կը մնան ազգաբնակչութիւնները կարգ մը տեղերու, ուր Հայերը աննշան թիւ մը կը կազմեն. օրինակ, Վանի վիլայէթէն Հէքեարին, Բաղէշէն՝ Սղերդի հարաւային մասը, Տիգրանակերտէն՝ Պիշէրէկը, Խարբերդէն՝ Մալաթիայի հարաւամասը, իսկ Սվասէն՝ հիւսիսային արևմրտեան մասը դուրս ձգուած են։

Աշխարհի վրայ գտնուած ամբողջ հա-

յութեան թիւը 3–3.5 միլիոնի մէջ պէտք է սահմանափակել մինչև 1914 թուականը:

Զենք գիտեր, թէ երբ Թուրքիոյ պատերազմը աւարտի, նոր վիճակագրութեամբ մը ո՛ր չափ հայեր պիտի գտնենք աշխարհի վրայ, քանի որ Թուրք վանդալութիւն և Գերման ֆըլչըր իրարու միացած, դժոխային վայրագութեամբ մը կը մորթոտեն Հայութիւնը, «Հայաստան առանց Հայու» դիւանագիտական հրէշութիւնը գործնականացնելու համար:

Եւ չնորհիւ այդ զզուելի և հակամարդկային բարբարոսութեան այսօր Թուրքիոյ մէջ չկայ հայ քաղաք մը, գիւղ մը, տուն մը, որ զրկուած չըլլայ իր ազգաբնակչութենէն: Դիակներ ու մեռելներ, ամէն կողմ, և ջարդերէն վերապրողները վայրկեանէ վայրկեան կըսպասեն մահուան մը, որ ապահովաբար իրենց քով կը մրափէ թունաւոր դիակի մը պէս: Ու վաղը մենք սգաւոր ուխտաւորութեան քալքով մը պիտի մօտենանք մեր Հայրենիքի արիւնոտ սեմին, համբուրելու զանի դարաւոր ուսուցիչական մասունքի մը պէս:

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ԳԵՐ. Տ. ԱՐՍԷՆ Ծ. ՎՐԴ. ՎԵՀՈՒՆԻ

Առաջնորդ և Նախագահ Ժողովոց

ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎ

ՊՈՍՏՈՆԻ ԹԵՄԷՆ.— *Գեր. Տ. Մուշեղ Արքեպ. Սերոբեան. Միհրան Սվազլը (Ա. Ատենապետ). Տր. Լեոն Յակոբեան. Դաւիթ Ղուկասեան:*

ՈՒՍՏՐ.— *Հոդ. Տ. Սերոբէ Քհնյ. Ներշապուհ. Գեղամ Միքրոյեան. Մինաս Զամանիկեան:*

ԲՐՈՎԻՏԷՆՍ.— *Հոդ. Տ. Վաղարշակ Վրդ. Արշակունի. Զաքար Դանիէլեան. Պապա Խալընեան. Վարդան Մամիկոնեան:*

ԼՕՐԷՆՍ—ԼՕՎԷԼ.— *Հոդ. Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան. Մարկոս Ա. Մանուէլեան (Բ. Ատենադպիր). Շմաւոն Միհասեան:*

ԹՐՈՅ.— *Հոդ. Տ. Տրիփոն Ծ. Վրդ. Պիծակեան, Մինաս Հայրապետեան:*

ՈՒԷՍԹ ՀՈՊՈՒԲԸՆ.—*Հոդ. Տ. Տի. Վրդ. Մարգարեան. Կարապետ Զանգալեան (Բ. Ատենապետ). Հայկ Սմսարեան:*

ՆԻՒ ԵՈՐՔ.— *Հոդ. Տ. Մատթէոս Քհնյ. Մանիկեան. Նշան Զաքեան. Գարե-*

գին Երկանեան :

ՖԻԼԱՏԷԼՖԻԱ — Հոգ. Տ. Պետրոս Քհնյ. Վարդանեան. Նազարէթ Կիւմիւշ-Կէրտանեան :

ՇԻՔԱԿՕ. — Հոգ. Վահրամ Վրդ. Նազարէթեան :

ՖՐԷԶՆՕ. — Վահան Քիւրքճեան. Մաղաք Պէրպէրեան (Ա. Ատենադպիր) :

ՖԱՒԼԸՐ. — Գէորգ Սրապեան :

ԵԴԷՄ. — Նիկողոս Խաչմանեան :

ՍԻՐԱՔԻՒՍ. — Տր. Փառնակ Ադամեան :

ՆԻՒ ՊՐԻԹԸՆ. — Ս. Տէմիրճեան :

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Գեր. Տ. Մուշեղ Արքեպ. Ատենապետ
Տէր Մաղաք Պէրպէրեան Ատենադպիր

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎ

Տ. Մուշեղ Արքեպ. Սերոբեան. (Ատենապետ). Տ. Սերոբէ Քհնյ. Ներշապուհ (Ատենադպիր). Տ. Տրդատ Ծ. Վրդ. Պիծակեան. Տ. Շահէ Ծ. Վր. Գասպարեան. Տ. Վաղարշակ Ծ. Վրդ. Արշակունի :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Տր. Փառնակ Ադամեան (Ատենապետ). Մաղաք Պէրպէրեան (Ատենադպիր). Գե-

ղամ Միքրոյեան. Գէորգ Սրապեան. Նիկողոս Խաչմանեան :

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ

Հովուական Թեմեր

ՈՒՍՏՐ. — Ս. Փրկիչ Եկեղեցի (65 Laurel St.) Հովիւ. Տ. Սերոբէ Քհյ. Ներշապուհ. Դիւան Հոգաբարձութեան. Մ. Պէրպէրեան (Ատենապետ). Ա. Էքմէքճեան (Ատենադպիր). Մ. Թէրխանեան (Գանձապետ) :

Շրջանակ. — ՈՒԱՅԹՆԸՍՎԻԼ. Յ. Ղուկասեան (Ատենապետ) : ՖԻՋՊՈՒՐԿ. Գ. Ճաղալեան (Գործակալ) : ՀԸՏՍԸՆ. ——— (Ատենապետ). ՄԻԼՖԸՐՏ ——— (Գործակալ) :

ՊՈՍՏՈՆ. — Պաշտամունք կը կատարուի Եպիսկոպոսանաց The Church of Advent եկեղեցին. Հովիւ. Տ. Մուշեղ Արքեպ. Սերոբեան (10 Brookdale St. Roslindale, Mass.). Դիւան Հոգաբարձութեան. Լ. Եսայեան. Ատենապետ. Ս. Կիւրեղեան. Ատենադպիր. Ա. Զաքարեան. Գանձապետ :

Շրջակայք և Ատենապետներ. — ՔԷՄՊՐԻՃ. Ղազար Տ. Մանուէլեան :

ՈՒՕՐԹԱՈՒՆ. Պ. Փելիկեան :

ԶԼՍԻ. Վ. Խապաչեան :

ՍԹՕՆՀԷՄ. Կ. Տ. Արխստակէսեան

ԼԻՆ. Տր. Լ. Յակոբեան :

ՄԻՏԸԼՊՕՐՕ· Կ· Զաքրաստեան· Գործակալ։

ՊՐԻՃՎՕԹԸՐ· Գ· Սեւուկեան· Գործակալ։

ՊՐԱՔԹԸՆ·— Պ· Փափազեան· Գործակալ։

ԲՐՈՎԻՏԷՆՍ·— ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑԻ (Armenian Apostolic Church. cor. Jefferson and Common Sts., Providence, R. I.)· Հովիւ· Տ· Վաղարշակ Ծ· Վրդ· Արշակունի· Դիւան Հոգաբարձութեան· Յ· Ճորճորեան· Ատենապետ· Ե· Գզիրեան, Ատենադպիր· Զ· Դանիէլեան, Գանձապետ։ Շրջակայք·— ՓՈԽԱԳԷԹ—ՍԷՆԹՐԼՖՕԼՍ· Ն· Փոստաեան, Ատենապետ։

ՈՒԷՍԹ ՀՈՊՈՔԸՆ·— Ս· ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ· (Հասցէ P. O. Box 36 W. Hoboken N. J.)· Հովիւ, Տ· Տիրայր Ծ· Վրդ· Մարգարեան· Դիւան Հոգաբարձութեան, Յ· Պօյաճեան, Ատենապետ· Ա· Գաղանճեան, Ատենադպիր· Յ· Զատուրեան, Գանձապետ։ Շրջակայք·— Բէթլրսըն, Նիւարք, Սմիթ։

ՆԻՒ ԵՈՐՔ·— Ս· ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ· վարձուած· (Հասցէ· E. 27th Rose Hill, New York, City)· Առժամեայ Հովիւ, Տ· Մատթէոս Քհնյ· Մանիկեան։ Դիւան Հոգաբարձութեան· Յ· Գալճեան, Ատենապետ· Գ· Երկանեան, Ատենադպիր· Գ· Տ· Պապեան, Գանձապետ։

ՖԻԼԱՏԵԼՖԻԱ·— Եկեղեցի նոր գընուած· Հովիւ Տ· Պետրոս Քհնյ· Վարդանեան (306 S. 60th St., Philadelphia, Pa.)· Դ· Հ· Ն· Կիւմիւշկէրտանեան Ատենապետ ———— Ատենադպիր· Մ· Կուլօյեան Գանձապետ։

ԹՐՈՅ·— Ս· ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ (Armenian Apostolic Church, Green Island, N. Y.) Հովիւ Տ· Տրիփոն Ծ· Վրդ· Դ· Հ· Ա· Կալօնեան Ատենապետ, Մ· Ազարեան Ատենադպիր, Հ· Մեծմօրուքեան Գանձապետ, (P. O. Box 3, Troy, N. Y.)։

ՇԻՔԱԿՕ·— Հովիւ Տ· Վահրամ Վրդ· Նազարէթեան· (1416 Dearburn St., Chicago, Ill.)։ Դ· Հ· Տր· Ա· Շէքէրճեան Ատենապետ, Ա· Թովմասեան Ատենադպիր, Ա· Արամեան Գանձապետ։

Շրջակայք·— ՈՒԷՍԹ ՓՈՒԼՄԷՆ· Ղ· Տինիճեան Ատենապետ։ ՈՔԵԿԸՆ·— Գրիգոր Գզիրեան Ատենապետ։ ՍԱՈՒԹ ՄԻԼՎՈՔԻ·— Փ· Մղոնեան Ատենապետ։ ՔՆՈՇԱ·— Կ· Սարգիսեան։ ՐԷՅՍԻՆ·— Միք· Խաչիկեան։

ՖՐԷԶՆՕ·— Ս· ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆ· (Հասցէ P. O. Box 290, Fresno, Cal.)· Հովիւ Տ· Վարդան Ծ· Վրդ· Գասպարեան։ Դ· Հ· Յ· Նշկեան Ատենապետ, Մ· Ալէմեան Ատենադպիր, Ս· Մելգոնեան Գանձապետ։

ՖԱՒԼԸՐ·— Ս· ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐ-

ՐԻՉ. (Armenian Apostolic Church, Fowler, Cal.). Հովիւ Տ. Մամբրէ Քհնյ. Փէլթէկեան: Դ. Հ. Գ.Տ. Յովակիմեան Ատենապետ, Յ. Սողիկեան Ատենադպիր, Յ. Սիմոնեան Գանձապետ:

ԵԴԷՄ.— Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. (Armenian Apostolic Church, Yettem, Cal.) Դ. Հ. Ն. Սպէնչեան Ատենապետ, Մ. Տէր-վիշեան Ատենադպիր, Մ. Թուխմանեան Գանձապետ:

ԼՕՍ ԱՆՃԷԼԷՍ.— (Պաշտամունք Եպիսկոպոսականաց եկեղեցիին մէջ,) Խոր-էն Փափազեան Ատենադպիր. (1116½ Maple Ave., Los Angelos, Cal.):

ԼՕՎԷԼ—ԼՕՐԷՆՍ.— Այցելու Հովիւ, Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան (Rev. S. Casparian, Episcopolian Theological School, Cambridge, Mass.): ԼՕՐԷՆՍ. (Պաշտամունք Եպիսկոպոսականաց եկեղեցին). Դ. Հ. Շ. Մինասեան Ատենապետ, Ա. Աճէմեան Ատենադպիր, Մ. Խենդիկեան Գանձապետ (M. Khentigian, 18 Summer St., Lowrence, Mass.): ԼՕՎԷԼ. (եկեղեցին նոր կը շինուի). Մ. Ա. Մանուէլեան Ատենապետ, (289 Central St., Lowell, Mass.): Շրջակայք և Ատենապետներ. ՀԷՎԵՐՀԻԼ. Մ. Կոստանեան (401 Washington St., Haverhill, Mass.): ՆԷՇՈՒԷ. Ս. Ուզունեան (67 Pine St., Nashua, N. H.): ՔԱՆԲԵՐՏ. — — — —

ՄԱՆՉԷՍԹԵՐ. — — — ՆԻՒՊՐԻՓՈՐԹ. (չկազմուած): ՏՈՎԵՐ. (չկազմուած): ԲՈՐԹԼԷՆՏ. Մովսէս Սիրունեան Գործակալ, (199 Congress St., Portland, Me.):

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԵՐ

ՔԱՆԷԹԻՔԷԹԻ ԹԵՄ.— 1. ՆԻՒ ՊՐԻԹԷՆ Դ. Հ. Գ. Ս. Գէորգեան Ատենապետ, Կ. Յակոբեան Ատենադպիր, Պ. Սիմոնեան Գանձապետ. (Հասցէ Armenian Apostolic Church, 45 Tremont St., New Britain, Conn.): ԹՕՄՍԸՆ ՎԻԼ. Հոգ. Հասցէ, (Armenian Apostolic Church, 23 Martin St., Thompsonville, Conn.). Ե. Փալասը-ջըզեան Ատենապետ, Ա. Թաթոեան Ատենադպիր, Ա. Իսկեան Գանձապետ: ՔՍԲՐԻՆԿՖԻԼԴ. Դ. Հ. Կ. Գարակէօզեան Ատենապետ, Ն. Յ. Փելիկեան Ատենադպիր, Յ. Աւետիսեան Գանձապետ, (Arm. Apostolic Church, 56 Harrison Avenue, Springfield, Mass.): ՀԱՐԹՖԸՐՏ, ՆԻՒ ՀԷՅՎԸՆ, ՊՐԻՃՓՈՐԹ, ՊՐԻՍԹՈԼ (անկազմակերպ):

ՐԻՉՄՈՆՏ.— Դ. Հ. Մ. Գամպուրեան Ատենապետ, Ս. Տիրացուեան Ատենադպիր, (215 N. First St., Richmond, Va.), Ն. Տարխանեան Գանձապետ:

ՍԻՐԱՔԻՒՍ.— Յ. Աղատեան Ատենապետ, (P. O. Box 393, Syracuse, N. Y.), Ե. Հապէչեան Ատենադպիր, Խ. Աղայեան

Գանձապետ։

ՆԻԱԿԱՐԱ ՖՕԼՍ։— *Մ. Բալուլեան* Ատենադպիր, (110 11th St., Niagara Falls, N. Y.)։

ՍԷՆԹ ԼՈՒԻԶ։— (*յանձնուած Շիքագօի հովութեան*)։ Իսք Սէնք Լուիզ։ *Ն. Ներսէսեան* Ատենապետ։ Սէնք Լուիզ։ *Մ. Սերոբեան*։ Կրանիք Սիթի։ *Լ. Ըէյլիսեան*։

ՏԻԹՐՈՅԻՏ։— *Վ. Օյնոյեան* Ատենապետ, (2080 W. Jefferson Ave., Detroit, Michigan)։

ԿՐԱՆԴ ՐԱԲԻՏ։— *Ա. Տ. Մովսէսեան* Ատենապետ, (665 Torener Ave., Grand Rapids, Michigan)։

ՔԼԻՎԼԷՆԴ։— *Ռ. Ճէնաղեան* Ատենադպիր, (6304 Broadway, Cleveland, Ohio)։ ԷՔՐԸՆ։—*Ա. Գրիգորեան* Ատենադպիր, (612 S. Main St., Akron, Ohio)։

ՔԱՆԱՏԱ

ՍԷՆԹ ՔԷԹԸՐԻՆԷ։— *Վ. Սէֆէրեան* Ատենապետ։

ՀԷՄԻԼԹՐԸՆ։— *Կ. Առաքելեան* Ատենապետ։

ՊՐԱՆՏՖԸՐԴ։— *Եղ. Մուրատեան* Ատենապետ։

ԿՕԼՖ։— *Թ. Յովհաննէսեան* Ատենապետ։

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Հովիւ, *Տ. Պաղտասար Քհնյ. Պարասաթեան*, *Կարապետ Զուլճեան* Ատենապետ, *Յովհաննէս Ներսէսեան* Ատենադպիր, *Մ. Բըզբուլահ*, *Ա. Սահակեան* Գանձապետ. (*Հասցէ*, La Collectividod Armeniana Calle Houdneus No 4688, Buenos Ayres, R. A.)։

ԹՈՒՐՔԻՆ ՀՈՒՆՁՔԸ

Կը հնձէ Թուրքն։ Երէկ հայու գլուխներ
Իրկեռ սուրին տակ կ'իյնային դիտապատ.
Եւ ինք զանոնք՝ մազկոնինչ, մախիզ՝ (1) կը ձօնէր
Եւրոպային, որ զըմռսէ արցունքով։

Կը հնձէ Թուրքն։ Այսօր ահա Թեսալիան
Խարտիւցայտ արեամբ, և չէրհերկողն ինք.
Պատերազմի դաշտն է իմ կալս՝ ըսաւ ան,
Ու ձաղկելով պիտի կամնեմ կեավուրներն։

Կը հնձէ Թուրքն։ Ու նակաւան(2) գոռոզին
Հելլէն գեղոյն ծաղիկն ընծայ կ'ուղարկէ։
Միապետները Քրիստոսի պիտ' հրսկեն,
Ճերմակ կուրտեր՝ (3) փատիւտահի հարէմին։

Թրգմ. Հ. Ա. Ղ. ՔԱՐՏՈՒՋՅԻ

(1) աղտոտ, (2) ցոփ (3) ներքինի,

ՃՇԴԵՆՔ ՄԵՐ ԴԻՐՔԸ

Մեր ազգային սա բաղդորոշ վայրկեաններուն, ալ պէտք է որ լրջօրէն ճըշդենք մեր դիրքը, երբ ահաւոր պատասխանատուութիւն մը հալած կապարի պէս կը ծանրանայ մեր խիղճերուն վրայ:

Հայաստանի կացութիւնը, որչափ ալ ուղեն պարտկել Թուրք ոճրագործ Կառավարութիւնը և Գերմանական չարակամութիւնը, ահռելիօրէն որոշ է և անհերքելի: Երէկուան ապրող ժողովուրդին տեղ այսօր դիակներու կոյտ մը միայն ունինք աչքերնուս առջև: Այդ դիակնացած կեանքերուն հետ մեռած է այլ ևս և՛ մտաւորականութիւնը, և՛ ճարտարարուեստը և՛ վաճառականութիւնը: Եւ եթէ Թրքական ջախջախումէն վերջ մեզի երջանկութիւնը տրուած ըլլայ աքսորանքի ճամբաներէն ժողվրտելու քանի մը վերապրողներ, անոնց հոգիներուն խորը դամուած պիտի գտնենք կա՛մ լկտիի ամօթին ու խաչելութեան և կա՛մ սարսափին և նօթութեան ստեղծած հիւծախտաւորումը:

Ապագայ Հայկական սերնդագործութեան, ազգաշինութեան նուիրական և հայրենասիրական գործը արիւնոտ բախտին անողոք բերումովը դրուած է Հայ գաղթականութեան ուսին վրայ: Մէկ խօսքով Ամերիկահայ երիտասարդութիւնն

է մանաւանդ այն կորիզը կամ կուտը, ուրկէ Հայութեան արմատախիլ ծառը պիտի բուսնի, Հայրենիքին աւերակները հովանաւորելու, և նոր կեանքով մը սրբելու ոճրագործ ձեռքերու արիւնոտ հետքերը:

Այսօր, առաւել քան երբեք, Հայաստանն ու իր հմայքը կրկնապէս նուիրականացած է մեզի համար: Անիկա սրբազան խորան մ'է եղած, որուն սեղանին վրայ ամբողջ սերունդներ, ամբողջ ազգ մը զոհուեցան: Եւ այդ արիւնով ծիրանուած Հայրենիքին վերակենդանութիւնը մեր սրբազան պարտականութիւնը պիտի մընայ: Եւ մեր ջանքերն ու զոհողութիւնները կանգ պիտի չ'առնուն մինչև որ այդ չինարար, վսեմ և աստուածային գաղափարը իրագործուած չըլլայ:

Այս կենսական և անտեղիտալի պէտքին առջև պէտք է ճշդենք մեր դիրքը:

Ազգի մը գոյութիւնը մշտնջենաւորելու երկու զօրաւոր ազդակներն են ֆիզիֆական և բարոյական ոյժերը: Ազգերը կըրնան ապրիլ այն ատեն, երբ այդ ազգը կազմող անհատները իրենց մէջ առողջ անատանին կը միացնեն պարկեշտ մարդը: Ֆիզիքական առողջութիւն և բարոյական մաքրութիւն երկու գերազանց յատկութիւններն են ազգի մը կեանքը յատկանշող:

Եւ ցաւալի է ըսել, այս երկու կենսա-

կան պէտքերն ալ չափազանցօրէն անտեսուած են Ամերիկահայ երիտասարդութեան կողմէն։

Դիւրագին և յարափոփոխ հաճոյքներու ետևէն հալչտաի վազք մը կարծես թունաւորած է արդի սերունդին ֆիզիքական ու բարոյական խառնուածքը և երիտասարդութեան տուած է ախտաւորութեան մը կնիքը։ Միւս կողմէն ընտանիքներու մէջ, մայրեր կը խորշին որդեծնութենէ, աւելի ազատ ու անկաշկանդ կարենալ իրենց հաճոյքներուն, իրենց զբոսանքներուն նուիրուելու համար։

Ֆրանսական ժողովուրդը անճիտող ազգային այս երկու պատուհասներու Ամերիկահայ դաղութի մէջ մուտքը չափազանցօրէն մտահոգիչ բնոյթ մը ունի մեզի համար և կ'արժէ որ ամենքիս ալ անվերապահօրէն անդրադառնանք չարիքին, և աշխատինք արմատախիլ ընել զայն մեր մէջէն։

Ճշմարիտ և անկեղծ հայրենասէրին պարտականութիւնը այս է և ա՛յս պէտք է ըլլայ։

Այս անտեղիտալի եւ անչեռաձգելի պարտականութեան գործնականացումին համար բռնադատող օրէնքներ չեն կրնար գոյութիւն ունենալ մեր դարուն։

Պարկեշտ մարդու, և ազգասէր քաղաքացիի գիտակցութիւնն է որ իբր օրէնք պիտի ծառայէ այդ ՄԵԾ ՊԱՐՏՔԸ կատարելու համար։

Եւ մենք այդ պարկեշտ մարդու, ազգասէր քաղաքացիի գիտակցութեան է որ կոչում կ'ընենք, երբ մեր խօսքը կուղղենք Հայ Երիտասարդութեան։ Որովհետև կը հաւատամ, թէ ախտաւոր, անբարոյական և աննկարագիր տարրերով չենք կրնար ի դլուխ հանել Ազգային վերաշինութեան հսկայ ծրագիր մը։

Թրքական խժդժութեանց հետքերը կրնան սրբուիլ, վերապրումի յամառ ու յարատեւող կամքը պիտի խորտակէ ոճրագործ ձեռքերը, բայց չկայ ոյժ մը, որ կարենայ մաքառիլ ցեղի մը մէջ երևան եկող ֆիզիքական և բարոյական անձնասպանութեան հակումներուն դէմ։ Այդ ոյժը մեր անհատական կամքին, մեր որոշադրականութեան, մեր անհատական վերանորոգումի փափաքին և ջանքին մէջն է միայն։

Եւ կ'արժէ որ յանուն Ազգին և յանուն նահատակուած Հայրենիքին այդ վերանորոգումի դաղափարը արթնցնենք մեր մէջ։

Պէտք է ճշդենք մեր դիրքը, և դանք, թէ առողջ ըլլալ, պարկեշտ ըլլալ հայրենասէրի մը առաջին և դլխաւոր պարտականութիւններ ն են։ Սերնդագործումի պարտականութեան կոչուած Ամերիկահայ երիտասարդութիւնը առողջ ու պար-

կեչտ ըլլալու իր կրկնակ դերը պիտի կըբնայ կատարել.

1.— Ինքզինքը նուիրելով ֆիզիքական հրահանգութիւններու (exercise), որոնց շարքին զինավարժական զբաղումները առաջին տեղը պէտք է բռնեն Ամերիկահայ երիտասարդին համար: Զինուորական այսպիսի հրահանգութիւններ ոչ միայն Հայ երիտասարդութիւնը պիտի մարզեն կռուող քաղաքացիի դերին մէջ, այլ և անոր պիտի տան կարգապահութեան ոգին, և զինքը պիտի հեռացնեն իր բարոյականն ու առողջութիւնը խանգարող հաճոյքներէ:

2.— Պէտք է ամուսնութիւններու մըղում տալ, և այսպէսով պահպանել ընտանեկան պարկեշտութիւնը, և վաղուան Հայ ցեղին հիմերը պատրաստել կազմուած ընտանիքներու մէջ:

3.— Հայ մայրեր պէտք չէ խորշին որդեծնութենէ, երբ իրենց պարտականութիւնն է այս ցեղին կեանքը մշտենջենաւորել: Եւ իրենք փորձով պիտի համոզուին, թէ մեծագոյն երջանկութիւնը իրենց ընտրուած և կամաւոր ամլութեանց պարգեւած հեշտութեան մէջ չէ, այլ հանրային—ազգային կեանքի մը համար իրենց ստանձնած մայրական քաղցր տառապանքին մէջ:

4.— Պէտք է Ազգային լեզու, Ազգային

զգացում մշակել շարունակ ընկերական և ընտանեկան շրջանակներու մէջ, ցեղին կորուստի վտանգը խափանելու համար: Եւ այս ուղղութեամբ ստանձնուած գործի մը մեծագոյն օժանդակը Հայ Եկեղեցին է ու պիտի մնայ, քանի որ անոր մէջ խտացած են ազգային դարաւոր աւանդութիւնները: Հայ Ազգ. կրօնական ոգին պէտք է մշակել ընտանիքներու մէջ, և ես կը հաւատամ անվերապահօրէն, թէ այդ մշակումը մեծապէս պիտի նպաստէ մեր բարոյական և ֆիզիքական զարգացումին, քանի որ այլ ևս ընդունուած ճշմարտութիւն մըն է, թէ Ամերիկահայը նախ իր կրօնական զգացումը կորսնցուց, և այդ կորուստին արդիւնքը եղաւ բարոյականի և յետոյ ֆիզիքականի կորուստը: Այդ կորուստները դարմանելու դիւրին միջոցներէն մէկն է վերադարձը դէպի կրօնական գիտակցութիւն, և դէպի եկեղեցի:

ԹԵԼԵՖՕՆ

Հեռուէն բերանացի խօսելու կարելիութիւնը շնչեց 1667ին, Անգլիացի գիտուն մը Robert Hooke. այնպէս որ թելեֆոնի սիստեմին նախահայրը կարելի է նըկատել զինքը:

Իրմէ վերջ 1819ին Sir Charles Wheatstone հնարեց իր «Magic lyre telephone»ը: 1867ին դրեթէ հնարուած էր խօսելու թե-

լեֆոնը «Membrane Telephone» անունին տակ, երկու տուփեր միացած ձգանով մը, զոր մենք մեր տղայութեան օրերուն կը գործածէինք։ 1837ին Ամերիկացի Page դասա, թէ մագնիսացած ձող մը (magnetic bar) կրնայ ձայները հեռու փոխադրել երբ յանկարծ կը մագնիսացուի և կը հակամագնիսացուի։ 1860ին Reis հնարեց «երաժշտական թելեֆոն» մը։ 1854ին Charles Bourseul թելադրեց էլեքտրական գործիքով բառեր փոխադրելու կարելիութիւնը։ Վերջապէս 1876 Փետր. 4ին Պոստոնէն Բրօֆ. Alexander Graham Bell, և նոյն օրը երկու ժամ վերջ Լոսանջելէսի ու չեռոյ Ամերիկեան քաղաքացի եղած Շիքակօէն Elisha Gray Վաշինկթընի փաթէնթ օֆիսին կը ներկայացնէին իրենց մանրամասնագիրը գործնական էլեքտրական թելեֆոնի մը մասին։ Նոյն տարին Ֆիլատէլֆիայի արուեստահանդէսին մէջ Gray ցուցադրեց Multiple Telegraphը, և Պէլ իր «Wonder of Wonders»ը։

Սոյն գիւտերը կատարելագործուեցան հետզհետէ, Մր. Թ. Լոսընի և Emile Berlinerի կողմէ ստեղծուած դիւրութիւններով, և ձայները ուժեղօրէն փոխանցող Microphoneներով։

Այսօրուան թելեֆոնը իր կատարելագործութեամբը կը պարտինք այս գիտուններու միացած ուժին։

ՏՐ. Յ. Յ. ԳՕԼԵԱՓԱՆԵԱՆ
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

181 Harrison Ave.
Boston Mass.

Tel. Oxford 4151 J

Պոսթոնի միակ հայ ատամնաբոյժը, որ բովանդակ խղճմտութեամբ, մաքուր, խնամուած ու կատարեալ ակռաներ կը շինէ։ Եթէ կուզես ակռաներուդ հեւանդութիւնը բուժել, կամ ակռայ շինել տալ. եթէ կուզես վստահելի ձեռքի մը յանձնուիլ և տուած դրամիդ կրկին արժէքով գործ մը շինուած ունենալ, անկասկած դիմէ իրենց. փորձը նոր վստահութիւն մը պիտի ներշնչէ քեզի։

Այս է անխտիր բոլոր իր յաճախորդներուն ճշմարիտ վկայութիւնը և յանձնարարութիւնը իրենց բարեկամներուն։

ԹՐՈՏՈՍԻ ՄԱՅՐԻՆԵՐՈՒՆ

Ա՛յնքան խոր են ձեր արմատներն՝ մայ-
րիներ,
Որ իմ վէրքիս պէս կոտտացող, որ ան-
դուլ
Ինքնութեանըս խորքերուն մէջ կը հինէր
Կարմիր պատանքը հոգիիս մշտահեծ,
Պոռթկալով վիշտ ու անէծ:

Ու հոգիիս բողոքներն ալ բարկ՝ կըծու
Կատարներուդ պէս բարձրուղէշ ու դալար
Դէպի երկինք ամբարձումով մը հուժկու
Կը բրգանան՝ արդարութեան ակնդէտ
Ամպածրար ու անհետ:

Շուրջ բուներնուդ՝ տերևներուդ պատաղի
Ռետինարույր լորձնուտ հոսող քիրան ա-
նուշ...
Այդ ծորումներն արցունքներն են իմ աղի,
Մշտաթառաչ վիշտերուս հորձքն, որ խո-
րէն
Սրտիս՝ հոսի ուղիղ օրէն:

Դուք կը ցցէք ըմբոստ ԵՍը իմ ցեղին,
Վերապրումի կանաչ ասուին հագնելով,
Եւ դարաւոր իր ցաւերու ցունց լեղին
Ու իմ ցաւս ալ հաւերժացնէք դուք պիտի
Երբ չիշատակս անհետի:

Դիտողն եղաք դուք Կիլիկեան Աղէտքին,
Ո՛վ Մայրիներ, խորհրդաւոր նայուածքով
Խողխողումին, լկումներուն ու սուղին,

Արիւններուն, ճիւաղներու գայրուցքին
Որ խոցեցին մեր հոգին:

Ականջ տուիք ստինքներէն կոյսերու
Է՛հ, կաթի տեղ հոսող արիւն—անէծքին,
—Լաւայի պէս այրող ցաւի ալեկոծ—
Ահականչին մեր նահատակ քոյրերուն
Ինկած՝ անտէր, հո՛ն, հեռուն:

Ա՛հ, պատմեցէք վաղուան Զարմին, դա-
րերուն,
Ցաւիտենուած՝ Աստուածներէն Ոլիմպեան
Թ՝ինձմով ցեղիս թափած արցունքն ու ա-
րիւն
Խառնեցան հոն՝ բուրումներնուդ հետ ռե-
տին
Հառաչանքովը իմ յետին:

ARAX
Grocery Company
56 Fulton St. Boston Mass.

ARAX GROCERY Co. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՊՈՍԹՈՆԻ ՄԷՋ ՈՒՆԻ ԻՐ ՀՈՂՄԷՑԼԻ և ՐԻԹԷՑԼԻ վաճառատուները, ուր պիտի կրնաք գտնել Արևելեան, Եւրոպական և Ամերիկեան ամէն տեսակ ապրանքներ։

Բոլոր մեր յարգոյ յաճախորդները կրնան անվերապահօրէն վկայել մեր ապրանքներուն ԹԱՐՄՈՒԹԵԱՆ և ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ինչպէս նաև մեր ընթացիկ գներուն անբաղդատելի ԱԺԱՆՈՒԹԵԱՆ։

Մասնաւորապէս ընտանիքներ կըրնան դիմել մեր 30 Kneelandի վաճառատունը, ուր բացառիկ գներով պիտի կրնան գտնել իրենց փնտռած ամենաթարմ ապրանքները։

Մեր նշանաբանն է ուղղամտութիւնը։

ԱՐԱՔՍ ՆՊԱՐԵՂԷՆԻ ԸՆԿ.

ՀՍԿՈՂՆԵՐԸ ԳԻՇԵՐԻՆ ՄԷՋ

1

Հսկո՛ղ գիշերն ի՞նչպէս է։

— Փոթորիկ, որոտում ու անձրև,— լոյսեր որ կը դողդոջեն ու կը նուաղին,— և պահակ հուրերը ա՛լ լոյս չեն տար։— Միայն՝ նշանալոյսերը կը դողան,— ու նաև կանթեղներու փայլը մերթ ընդ մերթ,—որ կը ցոլայ պալատէ մը ուր կողոպտիչները կը գահեն—մարդոց որդիները կոխոտելով։

2

Մարգարէ՛, ի՞նչպէս է գիշերը։

— Կանգուն եմ ծովուն ափը,—վըտարանդի, անմխիթար, ազատ,—մտիկ ընելով կոհակներուն շռինդը—և յանկարծաշող փայլակները որ կը հարուածեն—բռնաւորի մը գլուխը—որոտման շառաչիւնով մը որ մեռելներու ամբոխներ ծածկող գերեզմաններուն մէջ կը լսուի։

3

Լալկանն՝ը, ի՞նչպէս է գիշերը։

— Գիշերն ի բուն, անքուն—կուլանք, կուլանք ու կուլանք։—Ո՞վ մեզի պիտի դարձնէ մեր որդիները։—Ագռաւին ու անգղին կտուցնե՛ը,—գայլին ու որսաշունին երախնե՛ը—մեզի կը դարձնեն անոնք զոր թնդանօթները պատերազմի դաշտերուն վրայ ձեզի համար սպանեցին։

4

Մեռածնե՛ը, ի՞նչպէս է գիշերը։

— Թնդանօթը, կառափնատը և սուրը,—կախաղանին ու նոպանին արհաւիրքը—մեզ հնձեցին ինչպէս որաներ գերեզմանին համար,—մեզ հնձեցին՝ Իրաւունքին համար։—Ո՛չ ցաւ կը զգանք, ո՛չ զղջում։—Ազատօրէն՝ գրաւականներ տուինք ազատութեան,—մինչև որ կեանքը վերջանայ։

5

Պետակա՛ն մարդ, ի՞նչպէս է գիշերը։

— Գիշերը ինձի համար պիտի տևէ ինչքան որ ապրիմ։—Ոսկին թագի մը վրայ կամ ոնրի մը վրայ—դեռ աղտոր կ'երևայ՝ կանթեղներու լոյսով։—Չէ՞ որ մատներ ունինք գրելու համար,—շրթներ՝ ի հարկին երդուրննալու համար։—Այն ատեն, երբ վտանգը կծիկը դնէ,—երդումը գործին հետ կը թաղենք։

6

Պատերազմի՛կ, ի՞նչ է գիշերը։

— Գիշերը ըլլայ կամ ոչ, ինձ համար միևնոյն բանն է։ Ե՛ս միայն, գոնէ,—չեմ հարցներ ցողին թէ կը խամրեցնէ՞,—չեմ հարցներ բոցին՝ թէ կը սպանէ՞, —չեմ հարցներ իշխանին կամ քահանային—թէ ի՞նչքան ատենուան մէջ զիրենք գահընկէց պիտի ընենք։

7

Վարպե՛տ, գիշերն ի՞նչպէս է։

— Որդեա՛կ, գիշերը ո՛չ մէկ տեղ—փարատած է կամ պիտի փարատի—եթէ ոչ աստղերէն զարնուած մեր աչքերուն մէջ։ Մեր աչքերէն դուրս, ան իր թռիչը կ'առնէ։—չնայինք երբեք ո՛չ մեր առաջքը ո՛չ մեր ետին,— այլ շիտակ դէպի երկինքը։ Այն ատեն՝ գիշերը այլ ևս գոյութիւն չունի։

8

Ակսորեա՛լ, ի՞նչպէս է գիշերը։

— Ալիքներն ու ժամերը կը հոսին,—մահուան ու տարակոյսի եղանակները,—գիշերական հսկումները՝ դառն ու ցաւագին։—Շարժուն աւազներուն մէջ, աջ ու ձախ,—ոտքերս՝ մարմնոյս տակ կը խորասուզուին։—Բայց կը նանչնամ ափունքին բուրումները—և ծովուն լայն հոտաւէտ շունչերը։—

9

Գերի՛, ի՞նչպէս է գիշերը։

— Դուրսը, մեր վերև. անդադա՛ր, կը թափի—անձրև մը որ կարմիր է,— և մեր դէմքերը կ'աղտոտին այդ անձրևէն։— Հոս, ինչ ալ ըլլայ եղանակը, գիշերն ու ցորեկը նման են,— մինչև որ թագաւորներուն անէծքն ու մեր շղթաները— փըշրուին, և իրենց թակարդները խորտակուին։

10

Քրիստոնեա՛յ, ի՞նչպէս է գիշերը։

— Ձեմ կրնար ըսել. կոյր եմ։—Կանգ կ'առնեմ ու ետևս կը նայիմ,—թէ արդեօք ժամերը պիտի նահանջե՞ն—ու պիտի վերադառնա՞ն սիրելի մեռած լոյսին,—պահակ հուրերուն և աստղերուն որ երբեմն կը շողային հոն ուր այժմ երկինքը սև է,— կը տաքցնէին երկիրը հոն ուր այժմ ան ցուրտ է։

11

Քահանայապե՛տ, գիշերն ի՞նչպէս է։

— Գիշերը, հոս, ահռելի է,— սարսափին դժնէ դէմքերովը լեցուն,— և արիւնով, ու հրդեհներով։—Աչքերս զըրկուած են իրենց կեանքէն,— ձեռքերս լի են մոխիրով։—Եթէ իմ հաւատքիս Աստուածը ստախօս մըն է—ինչի՞ հաւատամ։

12

Իշխանքե՛ր, գիշերն ի՞նչպէս է։

— Գիշերը իր ժահահոտ շունչով— մեզ՝ մահու զաւակներս՝ կը սնուցանէ,— և իր աղջամուղջովը մեզ կը պարարէ։— Թալանը, սովը և արհաւիրքը—մեր ոտքերուն տակ կը կծկտին և մենք զանոնք կը սնուցանենք։— Հողը, ուր մենք կ'անցնինք, գերեզման մըն է,— կեանքը ուր մենք յաղթական ենք՝ մեռած է։

13

Մարտիրոսնե՛ր, ի՞նչպէս է գիշերը։

— Ձէ՛. միթէ դեռ գիշե՞ր է մեզի համար։—Մենք կը մոռնանք—ինչ որ էր գիշերը,—եթէ երբեք ան գոյութիւն ունեցած է։—Պայքարին կարմիր, փառաւոր բերանները— լուռ են ու փակ՝ հոն ուր մենք կանք։—Մեր աչքերուն մէջ, մրրկոտ օդը —կը փայլի ինչպէս աստղի մը դէմքը։

14

Անգլիա՛, գիշերն ի՞նչպէս է։

— Գիշերը եղած է հանգստեան ու քունի համար,—և հրատապ՝ լալու ատեն չէ։— Ձիս մինակ ձգեցէք մինչև լոյս։— Կ'ուզէի դեռ քնանալ՝ եթէ կարենայի,— ես որ երկու հարիւր տարի քնացայ։—Ատենով ես մեծարուած էի՝ կ'ըսեն.—բայց քունը աւելի քաղցր է քան արցունքը։

15

Ֆրանսա՛, գիշերն ի՞նչպէս է։

— Գիշերը կէս-օրն է՝— համբուրուած ու մինչեւ թալկացում յագեցած,— թուքով ծածկուած, կոխոտուած, տիրացուած բոզին։— Արիւնի պէս կարմիր վարդերու դրասանգներով պսնուած,— իմ շուրջս պարելով կը դառնայ—Մահը՝ պսակաւոր, իմ ազատիչս, իմ տէրս։—ա՛լ Ֆրանսա չկայ։

16

Իտալիա՛, ի՞նչպէս է գիշերը։

— Ա՜խ, զա՛ւակս, ի՜նչքան երկար է ան։—Լուսնին ճառագայթները, աստղերուն ճառագայթները և երգերը — հիմա զայն լուռ ու մունջ կը թողուն։—Կը զգամ սակայն բարձունքներուն վրայ—արեւելքի կողմը, այժմ ո՛չ շատ հեռաւոր։—երգ մը որ շատ ուժեղ է՝ արտոյտին երգն ըլլալու համար,— լոյս մը որ շատ հզօր է աստղի մը շողն ըլլալու համար։

17

Գերմանիա՛, ի՞նչպէս է գիշերը։

— Երկայն ատեն, ան զիս օրօրեց եռազներով։—հիմա, հսկման մէջ, ինձի կը թուի թէ լոյսը կը վերածնի իմ աչքերուս։—և թէ երբեմի տիրապետութիւնն ու զօրութիւնը — ձեռքերուս յօդերուն մէջ կ'ապրին,— կ'ամրացնեն անդամներս որ կը կանգնին,— կ'ուժգնցնեն ոտքերս որ կը ցցուին։

18

Ուրեմն՝, գիշերն ի՞նչպէս է։

— Հարցուցէք երկնքին ու երկրին,— և ծոցիս վրայ ունեցած ստնդիաց մանուկներուս,—իմ ազգերուս որ կազմուելու վրայ են։—Անոնցմէ մէկը կայ, որ ապահովապէս վրէժը պիտի լուծէ—անոնց որ կը տառապին կամ կը թափառին։— Ան միայն կարող է պատասխանել—ինծի մի՛ հարցնէք, այլ անոր։

19

Ազատութի՛ւն. գիշերն ի՛նչպէս է։

—Չեմ զգար կարմիր անձրեւներուն տեղալը,— ալ չեմ լսեր փոթորիկը,— ոչ ալ որոտումը երկինքին մէջ։— Ամբողջ միջոցը սպիտակ է՝— արեւուն լուռ ոտքերէն։— գիշերը, բոլոր անէծքներովը զոր իր մէջ կը կրէր,— գիշե՛րը՝ ալ անցած՝ վերջացա՛ծ է։

Թրգմ. Ա. Զ. ՍՈՒԻՆՊԸՐՆ

JONH GORAKIAN & SON

33 KNEELAND ST.

BOSTON MASS

Մեր ծխախոտի և սիկրէթի վաճառատան մէջ պիտի գտնէք Թրքական, Ռուսական, Պուլկարական, Յունական, և տեղական ամէն տեսակ ծխախոտներ, և սիկրէթներ։

Կը պահենք Բրիսմըսի յատուկ ձեռագործ նուէրներ, սեղանի, դաշնակի ծածկոցներ, ձեռքի տոպրակներ, և շատ մը արեւելեան ձեռագործներ։

Կը պահենք ծխելու վերաբերեալ ամէն տեսակ գործիքներ, և նարկիլէ, ինչպէս նաև թաւլու, սիկրէթի մեքենաներ, սիկրէթի և գրի թուղթեր դիւրամատչելի գներով։

Ֆոնոկրաֆ, ռէքորտ և Հայկական երգանակներ։

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԱԱՂՄՈՍ

. . . . . .

Տէ՛ր, յանուն այնքան քաջերու,
Որ մեկնեցան, անայլայլ
Եւ արի հլու ու խոհուն
Եւ որ կռուի մէջ ինկան. . . .:

Տէ՛ր, յանուն ա՛յնքան մայրերու
Որ զաւկներուն համար իրենց՝
Քեզ կաղօթեն.
Եւ որ ո՛չ գալ տարի, աւա՜ղ,
Ո՛չ միւս տարին
Այլ չ'տեսնեն պիտի զանոնք:

Տէ՛ր, յանուն այնքան կիներու,
Որ երախայ մ'ունին փոքրիկ՝
Գիրկերնին,
Եւ որ խեղճերն, արցունքներով
Կը թրջեն հողը եւ սաւանը,
Իրենց անկողնոյն:

Տէ՛ր, յանուն այն թշուառներուն,
Ուժեղներուն, մեռածներուն,
Որոնք կորան Հայրենիքին,
Իրենց հաւատքին
Ու պարտքին համար:

Տէ՛ր, ա՛յսքան մեծ աղէտներէ
Ցետոյ եւ այսքա՛ն ցաւէ
Ու արցունքէ
Այսքա՛ն քանդուած քաղաքներէ
Եւ թափուած ա՛յսքան քաջ ու սուրբ
Արիւնէ

Տէ՛ր, յետոյ այսքա՛ն փորձանքէ
Ու ջարդերէ, հրդեհներէ,
Մեր Ֆրանսայի վրայ այսքա՛ն սուգէ յետոյ
Եւ մեր ճակտին վրայ այսքա՛ն անարգանքէ:

Տէ՛ր, զինաթափ ըրէ այլեւս արդարութիւնդ,
Այլ մը նետէ մեր վրայ,
Ու վերջապէս լսէ ճիչը
Ընկճուածներուն, խոցուածներուն.

Տէ՛ր, չարիքին հեղինակները մենք չենք:
Խաղաղութեան մեզի ճանչ մը ղրկէ հոս.
Տէ՛ր, մեր դատին դուն օգնութեան հասիր:
Եւ մենք վերստին պիտի ապրինք...
Ու սիրենք:

Թարգ. Ա. Զ. *Ֆ. ՄԻՍԹՐԱԼ*

ՆՇԱՆԱՒՈՐ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Քրիստոսէ Առաջ

885 · *Լիկուրգոսի Օրէնքները կը հրատարակուին:*
870 · *Կորնթացի Կլէոփանտէս կը հնարէ միագոյն նկարը:*
800 · *Հնդիկ գիրը կը գտնուի:*
776 · *Ոլիմպիական խաղերը կը հաստատուին Յունաստանի մէջ և կ'սկսի Ոլիմպիական թուականը:*
658 · *Հիմնարկութիւն Բիւզանդիոն (Պոլիս) քաղաքի:*
625 · *Կիաքսար Մարաց, իսկ Նապուպոլասար Բաբելոնի թագաւոր կ'ըլլան:*
624 · *Դրակոն Աթենացւոց օրէնքներ կը խմբագրէ:*
550 · *Հիմնարկութիւն Հայ Արարատեան թագաւորութեան:*
449 · *Հռոմէական Տասն Տախտակաց Օրէնքը կը հրատարակուի որ է Հռոմէական Օրէնսգիտութեան առաջին յիշատակարանը:*
356 · *Մեծն Աղեքսանդրի ծնունդը. նոյն օրը Երոստրատոս կ'այրէ Եփեսացւոց Արտեմիսի տաճարը:*
331 · *Աղեքսանդր Նեղոսի գետաբերանին եզերքը կը հիմնէ Աղեքսանդրիա քաղաքը:*

—Արբելայի ճակատամարտ ուր Աղեքսանդր կը յաղթէ Դարեհի։
315. Զինու մեծ պարսպին շինութիւնը կ'սկսի։
300. Զենոն յոյն իմաստասէրը կը հիմնէ Ստոյիկեան դպրոցը։
280. Պտղոմէոս Եգիպտոսի թագաւորը կը կը շինէ Փարոսը, և Եղիազար քահանայապետին տեսչութեան տակ Ցունարէնի թարգմանել կուտայ Ս. Գիրքն, որ է Եօթանասնից թարգմանութիւնը։
150. Հիմնարկութիւն Արշակունեաց թագաւորութեան։
95. Մեծն Տիգրան կը թագաւորէ։
47. Աղեքսանդրիոյ հռչակաւոր մատենադարանը կ'այրի։
45. Ցուլիոս Կեսար կը բարեկարգէ Հռոմէական տոմարը։

Քրիստոսի Թուական

34. Թադէոս առաքեալ կը քարոզէ Հայոց։
43. Ս. Թադէոս առաքեալ ու Ս. Սանդուխտ կոյս կը նահատակուին։
239. Ծնունդ Ս. Գրիգոր Լուսաւորիչի։
303. Նաւակատիք Մեծի Տաճարին Ս. Էջմիածնի (Օգոստոս 15)։
328. Կոստանդիանոս Բիւզանդիոնի տեղւոյն վրայ Կոստանդնուպոլիսը կը հիմնէ։
330. Նաւակատիք Կոստանդնուպոլիս նոր

քաղաքի (Մայիս 11)։
374. Ս. Ներսէս Մեծն կը վախճանի (Ցուլիս 25)։
404. Հայ գիրը կը գտնուի Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի ձեռքով։
434. Ս. Գրոց հայերէն թարգմանութիւնը կը լրանայ և կը կատարելագործուի։
439. Ս. Սահակ Պարթև կը վախճանի (Սեպտեմբեր 7)։
440. Ս. Մեսրոպ Մաշտոց կը վախճանի (Փետր. 17)։
484. Կաթողիկոսական աթոռը հաստատապէս կը փոխադրուի Դուին։
530. Շերամը Սերեկիայէն (Զինաստանէն) Եւրոպայ կը փոխադրուի։ — Թուղթը կը յաջորդէ պապիրոսին։
552. Սկիզբն Նոր Թուականին Հայոց (Նաւասարդ 1, Ցուլիս 11)։
596. Վրացիք կը բաժնուին Հայկական Եկեղեցիէն։
622. Իսլամութիւնը կը հաստատուի, Հիճրէթի Թուականին սկիզբը (Ցուլիս 16)։—
640. Արաբացիք կ'սկսին գործածել կողմնացոյցը։
700. Թատրոն ու երաժշտութիւն կ'սկսի Զինաստան։
779. Սկզբնաւորութիւն Ռուս տէրութեան։
807. Թուղթի գործածութիւնը կ'սկսի Եւրոպիոյ մէջ։

809· Հարուն–էլ–Ռաշիտ Մեծն Կարոլոսի նուէր կը դրկէ Գողդոթայի եկեղեցւոյն բանալիները:

827· Մեծն Եկպերդ կը հիմնէ Անգղիոյ թագաւորութիւնը:

843· Մեծն Կարոլոսի կայսրութիւնը կը բաժնուի, և Իտալիոյ ու Գերմանիոյ ու Գաղղիոյ թագաւորութիւնները կը կազմուին:

850· Շադարի գիւտն Արաբացիներու ձեռքով:

871· Մեծն Ալպերդ Լոնտրան կ'ընէ մայրաքաղաք Անգլիոյ:

885· Աշոտ կը հիմնէ Բագրատունեաց թագաւորութիւնը:

1000· Հունգարական թագաւորութիւնը կ'սկսի:

1147· Հայ Կաթողիկոսական աթոռը Հռոմկլայ կը փոխադրուի:

1200· Ֆրանսայի մէջ կ'սկսի կողմնացոյցի գործածութիւնը:

1205· Անգլիոյ թագաւորը կ'ստորագրէ «Մեծ օրինագիրք»ը, որ է Անգլիոյ օրէնքներու հիմնագիծը:

1248· Առաջին թղթադրամի երևումը Միլանի մէջ:

1267· Դիտակի գիւտը:

1290· Ֆլորենցացի Սալվինոյ տէյլի–Արմատի կը հնարէ ակնոցը:

1299· Սուլթան Օսման Ա· Օսմանեան կայսրութիւնը կը հիմնէ:

1304· Իտալացի Ֆլավիոյ Ճիոյա կը կատարելագործէ կողմնացոյցն որ արդէն դարեր առաջ Չինացիներու ծանօթ էր:

1308· Հելուետիա Զուիցերի իշխանութիւն կ'ըլլայ:

1311· Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը Ֆերմանով կը հաստատուի:

1361· Խաիրնէ Օսմ· կայսրութեան մայրաքաղաք կ'ըլլայ:

1380· Թնդանօթի գիւտը:

1440· Կութենպէրկ Մայանցի մէջ կը հնարէ տպագրութիւնը:

1441· Հայոց Ընդ· Կաթ· Աթոռը Ս· Էջմիածին կը վերահաստատուի:

1453· Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ Երկամսեայ պաշարումով կը տիրէ Կ· Պոլսոյ (Մայիս 29)

1454· Ս· Գիրքն առաջին անգամ կը տպագրուի:

1461· Սկզբնաւորութիւն Կ· Պոլսոյ Պատրիարքութեան Հայոց:

1477· Իվան կը հիմնէ Ռուսական կայսրութիւնը:

1500· Գրպանի ժամացոյցի գիւտը Նիւրնպէրկի մէջ Բեթէր Հենլայնի ձեռքով:

1512· Վենետիկի մէջ առաջին անգամ կը տպագրուի պարզատոմար՝ Յակոբ անուն մէկու մը ձեռքով: Այս է Հայոց մէջ առաջին անգամ տպագրուած գիրքը:

1524. Առաջին ձեռագիր լրագիրն Եւրոպայի մէջ։
1565. Արդար դպիր Թոդատցին Վենետիկի մէջ կը տպագրէ առաջին անգամ սաղմոսը։
1582. Տոմարը կը նորոգուի եւ Գրիգորեան տոմարը կ'սկսի (Հոկտ. 15)
1615. Ֆրանքֆորթի մէջ առաջին անգամ լրագիր կը հրատարակուի։
1618. Տրիպլիլ կը հնարէ ջերմաչափը զոր կը կատարելագործէ Ռէօմիւր։
1636. Ռիչիլէոյ առաջին անգամ կը հիմնէ Ֆրանսական Ակադեման։
1643. Թորիչելլի կը փորձէ օդին ծանրութիւնը և կը հնարէ օդաչափը։
1663. Շոգեշարժ մեքենան կը հնարուի։
1703. Ռուսիոյ Զար Մեծն Պետրոս կը շինէ Ս. Բեդերսպուրկ քաղաքը (Մայիս 3 29, Նոր Տոմար)։
1712. (Օգոստոս 12) Ճոն Հանուէր Անգլիացին կը հնարէ հովանոցը։
1780. Գիւտ օդապարիկի։
1801. Մարմնոյ պատուաստը կը գտնուի։
1812. Արագատիպ մեքենան կը հնարուի։
1807. Ֆուլթըն առաջին շոգենաւը կը շինէ։
1829. Սդեֆէնսըն կը հնարէ շոգեշարժը։
1832. Ֆրանսայի մէջ Լիոնէն մինչև Սէնթ–Էդիէն երկաթուղւոյ փորձ կը կատարուի։
1836. Պալաժենիան կը հրատարակուի։

1839. Լուսանկարը կը գտնուի։
1849. Հեռագիրը կը հնարուի։
1861. Իտալիոյ Թագաւորութիւնը կ'սկսի։
1869. Սուէզի ջրանցքը կը բացուի։
1873. Պուլկարք կը մերժեն ճանչնալ Օրթոդոքս պատրիարքին իրաւասութիւնը։
1879. Ելեքտրական լապտերներու գիւտը։
1880. Հեռախօսի գիւտը։
1881. Զայնագրի գիւտը։
1898. Անթել հեռագրի գիւտը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԴՊՐՈՑԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Վերջին Դարերու Հայ Տարեգրութիւններէ Քաղուած

Արդար դպիր Հռոմ կը ղրկուի տպագրութեան համար 1562 Մայիս 20։
«Ազարիայի Թուականը» կ'սկսի 1615 Մարտ 21։
«Ազդարար» Հայոց առաջին թերթը կը հրատարակուի։
Աստուածաշունչի առաջին տպագրութիւնը կ'աւարտի 1668 Հոկտ. 13։
«Արարատ» Էջմիածնի կրօնաթերթը կը հրատարակուի 1668 Մայիս 1։
Արմաշու գիշերօթիկ վարժարանը կը բաց-

ուի 1873 Փետր. 13:
—Դպրեվանքը կը բացուի 1889 Սեպտ. 18:
«Աւետարբեր» կը հրատարակուի 1855 Յունուար 3:
«Բազմավէպ» կը հրատարակուի 1843 Ապրիլ 18 (Ն. Տ. Մայիս 1):
«Բիւզանդիոն» կը հրատարակուի 1896 Նոյեմբեր 4:
Գրիգորոպոլիս քաղաքը կը հիմնուի 1792 Յուլիս 25:
«Եղնիկ» առաջին անգամ կը տպագրուի 1762 Յուլիս 4:
«Եղիշէ» առաջին անգամ կը տպագրուի 1764 Ապրիլ 10:
Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքն եւ կառնուի Յունաց ձեռքէն 1659 Սեպտ. 17:
Էջմիածին Պարսիկներէն Ռուս իշխանութեան տակ կ'անցնի 1827 Հոկտ. 2:
—Սինոդին հանդիսաւոր բացումը 1844 Սեպտ. 14, որ դադրած էր 1828էն ի վեր
—Կաթողիկոսին անունը կ'սկսի տիշուիլ 1840 Սեպտ. 15, որ դադրած էր ատեն մը:
Թուրքիոյ Հայ եպիսկոպոսներն ու վարդապետները կ'սկսին կրել սև ու մանիշակագոյն թաւշէ փակեղ, և Հայ քահանաները սև չուխայէ 1845 Ապրիլ 7:
Լազարեանց Ճեմարանը կը բացուի 1815 Մայիս 5:
Հիւանդանոցին նոր շէնքը կը հիմնարկուի 1888 Օգոստ. 18:

Հոգևոր ու դերագոյն ժողովներ կը հաստատուին 1847 Մայիս 9:
«Հանդէս Ամսօրեայ» կը հրատարակուի Մայր Եկեղեցւոյ (Գում Գաբուի) նոր հիմնարկէքը 1823 Փետր. 10, օծում 1828 Հոկտեմբեր 14, որ այրած էր 1826, նորոգում 1888 Ապրիլ 6, վերջին նորոգութիւն 1902 Դեկտ. 29:
«Մասիս» կը հրատարակուի 1852 Փետ. 2:
Մխիթար Աբրայ ծնի 1676 Փետր. 17, վախճանի 1749 Ապրիլ 16:
Մուրատեան Վարժարանը Բատուալէն Բարիզ կը փոխադրուի 1846 Յունիս 11 որ հիմնուած էր 1834 Օգոստ. 14:
Ներսէս Ե. Կաթողիկոս Աշտարակեցի ծնի 1771 Օգոստ 13, կ'ընտրուի 1843 Ապրիլ 17, վախճանի 1857 Փետր. 13:
Նոր տօնացոյցը (Սիմէոն Երուացի) գործադրութեան դրուի 1777 Յունվար 2:
Ուսումնական Խորհուրդ առաջին անգամ կ'ընտրուի 1853 Հոկտ. 22: ——— ———
Պեղճեան Յարութիւն Ամիրա ծնի 1771 Ապրիլ 10, վախճանի 1834 Յունուար 3:
Պալաժենիան հրատարակուի 1836 Մարտ 11:
Սանասարեան Մկրտիչ ծնի 1818 Ապրիլ 10 վախճանի1890 Մայիս 19:
—Վարժարանը կը բացուի 1881 Հոկտ. 1:
Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը

հիմնուի 1773 Թրիէսթ, յետոյ Վիեննա փոխադրուի 1811։
Օշականի Ս. Մեսրոպ Եկեղեցին կ'օծուի 1879 Հոկտ. 21։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

885 Աշոտ Ա. կը թագաւորէ
891 Սմբատ Ա. որդի Աշոտի
894 Սմբատ Դուինը կը նուաճէ
914 Աշոտ Բ. Երկաթ, որդի Սմբատի
928 Աբաս որդի Սմբատի
953 Աշոտ Գ. Ողորմած, որդի Աբասի
977 Սմբատ Բ. որդի Աշոտ Գ.ի
990 Գագիկ Ա. Շահնշահ. որդի Աշոտ Գ.ի
1020–1041 Յովհ. Սմբատ Գ. որդի Գագիկի
1042–1045 Գագիկ Բ. որդի Գագիկի ——

ՌՈՒԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Իշխաններ

1080–1095 Ռուբէն Ա.
1095–1100 Կոստանդին Ա.
1100–1123 Թորոս Ա.
1123–1137 Լեւոն Ա.
1145–1168 Թորոս Բ.
1168–1174 Մլեհ
1174–1186 Ռուբէն Բ.

Թագաւորներ

1186–1219 Լեւոն Բ. Ա. Թագաւոր

1222–1226 Ֆիլիպ փեսայ Լեւոնի
1226–1270 Հեթում Ա.
1270–1289 Լեւոն Գ.
1289–1301 Հեթում Բ.
1301–1307 Լեւոն Դ.
1307–1320 Օշին
1324–1342 Լեւոն Ե.
1345–1363 Կոստանդին Բ.
1365–1373 Կոստանդին Գ.
1374–1375 Կոստանդին Դ.
1375 Լեւոն Զ. (Ապրիլ 16ին Սիսի բռնակալները կը յանձնուին օտարին)։

Tel Oxford 6135 M

Standard Shoe Making Company

1297=99 Washington St.

BOSTON MASS.

Նկատի առած ես թէ պատրաստի կոշիկ գնելը քիչի միջտ մտատանջութիւն մը եղած է, պատճառը այն է որ կամ քեզ նեղած կամ խաբած են հագնելովդ։

Այդ խնդիրը լուծելու միջոցը մենք ունինք։

Ոտքիդ չափը առնելով, զուտ և լաւագոյն կաշիէն քեզի զոյգ մը կոշիկ կը շինենք պատրաստ կոշիկի վճարելիքդ գնովը։

Ոտքիդ և քսակիդ ոիրուն փութամեզ տեսնել։

Ց. Խ. ԹԱՇՃԵԱՆ

ԱՐԱՐԱՏ ՆՊԱՐԵՂԷՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Հայ ընտանիքներու համար, Պոսթոնի մէջ ունինք երկու փոքրաքանակ խանութ, ուր ամէն տեսակ նպարեղէններ փոքրաքանակ կը ծախենք մեծաքանակ գնով։ Միայն մէկ անգամ փորձեցէք, վստահաբար գիտենք որ մեր մնայուն յաճախորդը պիտի ըլլաք։

Մարքէթին մէջի խանութը,
54 Նորթ Սթրիթ, երկրորդ յարկ

Սաութ Էնտի խանութը
39 Նիլէնտ Սթրիթ

Կարդացէք նաև մեր մայր վաճառատան յայտարարութիւնը էջ 21-22։

ԳԻՆ 25 ՍԷՆԹ